13 45 +000

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՆԱԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
1930

Zm. 98

ԽՍԶՄ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք ՀԽՍՀ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՆԱԿՈՒՄ

17212
Ա-ՀԱՏԿ

ՀԱՅԿ· ԴԻՎ· ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1980

ՀԱՅԿՈԼԻԴՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 4082 (Բ)
ՊԱՏՎԵՐ 1690 ՏԻՐԱԺ 2000

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ.

(ԽՍՀՄ–ի Անաստվածների Միության համամիութենական յերկրորդ համագումարի դիմումը)

Մենք, անաստվածներս, Անաստվածների Միության միլիոնավոր անդամների և մեր յերկրի բազմամիլիոն չհավատացող աշխատավորության ներկայացուցիչներս, հավաքվելով անաստվածների համամիութենական յերկրորդ համագումարին, դիմում ենք ձեզ բոլորիդ, հավատացյալներին և չհավատացողներին, ասելու համար, թե ինչ պատճառներ են դրդում մեզ պայքարելու կրոնի դեմ, թե ինչի համար ենք մենք ստեղծել Անաստվածների Միություն:

ԿՐՈՆԻ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԱՇԻՆՔԸ

Մենք, անաստվածներս, չհավատացողներս դեմ վարքամտնություն ենք կազմում: Բոլոր յերկրների աշխատավորության մեծագունակ մասսան գտնվում է դեմ կրոնի ազդեցության տակ: Ամբողջ աշխարհում դեմ գոյություն ունի հոգևորականության հզոր կազմակերպություններ: Հոգևորականության, եկեղեցականների, վանականների, կույսերի, բավիների, ռաբբիների, մոլլաների, լամաների այդ կազմակերպությունները հանդիսանում են կալվածատերերի, կապիտալիստների, իշխանների, կուլակների և առևտ-

տրականների, բոլոր յերկրների բանվորներին և գյուղացիներին ամեն տեսակի շահագործողների դասակարգային տիրապետության ապարատի մի մասը: Շահագործողների բոլոր յերկրներում կենսագործված է յեկեղեցու և պետության դաշինքը: *Մի շարք յերկրներում այդ դաշինքը բացահայտ է, իսկ ուրիշներում՝ խոսքով յեկեղեցին անջատված և պետությունից, իսկ գործով նա այդ պետության գենքն է, գործակիցը, սպասուհին՝ մասսաներին հիմարացնելու և շահագործելու համար:*

ԿՐՈՆԸ, ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՃՆՇԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ Է

Գոյություն չունեցող աստվածների և աստվածուհիների անունից, կրոնի անունից, մարդկության պատմության ընթացքում կատարվել են ամենից սարսափելի չարագործությունները: Հանուն կրոնի խոպան վոչնչացվել են ամբողջ ժողովուրդներ: Կրոնը ծառայել է վորպես ծածկույթ այդ ժողովուրդներին ամենալպիրշ կերպով թալանելու համար: Հանուն աստծու և կրոնի սպանվել են միլիոնավոր մարդիկ, տասնյակ և հարյուր հազարավոր մարդիկ այրվել են խարույկների վրա, խեղդվել և խոշտանգվել են միջնադարյան ինկվիզիցիայի դահիճների ձեռքով: Կրոնը և պետությունը, տերտերը, ավատականը և ճորտատերերը, վանականները ու դահիճը գործել են ձեռք-ձեռքի տված: *Յուրաքանչյուր «սպասամիտ», յուրաքանչյուր նա, ով իր բողոքի ձայնն է բարձրացրել ժողովուրդների դարավոր խաբեության դեմ, տիրապետող դասակարգերի կողմից, կրոնական կազմակերպությունների կողմից ենթարկվել և հալածանքի:* Կրոնը սուրբ գրքի, ավետարանի դուրանի և այսպես կոչված «սրբազան գրքե-

ին» բնագրերից մեջբերումներով ներիրագործել է դաբաղոր ստրկությունը, աղքատությունը, շահագործումը, տգիտությունը: Այն սարուկներին, վորոնք դուրս են գալել պայքարի, նա խորհուրդ է տվել համբերել, կոչել է խոնարհության, քարոզել է. «Սարուկները թող հնազանդ լինեն իրենց տիրոջ»: Կարիքի, խավարի ու դասակարգային ճնշման տակ հեծող մարդկանց յեկեղեցին խորհուրդ է տվել համբերել, խոստանալով նրանց յերկնային թագավորության մեջ պարգևներ: Դրա համար յեկեղեցին կալվածատերերից և կապիտալիստներից ստացել է և ստանում է ահագին յեկամուտներ: Նա գալիթել է մեծաքանակ հողեր, ահագին հարստություն և դիրք: Վանքերը յեղել են ազնվական և ամեն տեսակի շահագործման բներ:

Տերտերը յերբեք չի խոսել ամենատանամոթ կերպով խաբելու համար մասսաներին: Տերտերները ստեստուր են արել և ստեվատուր են անում «յերկնային ոգնության», ստեվատուր են արել և ստեվատուր են անում մեղքերի թողության, զազապների և տերտերների վերթած դիակների մասունքներով: Ոգտվելով ժողովրդական տգիտությունից ահագին հարստություն են դիզել և դիզում են ամեն տեսակի «սրբատան իրերի» վաճառումով, վորպիսին է «սուրբ ջուրը» և այլն: Սա խիստական կրոնական խաց է ժողովրդի մարմնի վրա:

Հենց կրոնի միջոցով է, վոր շահագործողները փորձ են անում միացնել և հաշտեցնել դահիճին իր զոհի հետ, տիրոջն իր սարուկի հետ: Այդպիսով նրանք նպատակ ունեն մթագնել, ծածկել շահագործողների և շահագործվողների շահերի միջև գոյություն ունեցող սարսափելի ցուցիչ անդունդը: Նրանք նպատակ ունեն մթագնել բանվոր դասակարգի և աշխատավոր գյու-

դացիության մասսաների առաջ յեղբայրակից դասակարգերի հետ միանալու անհրաժեշտությունը բոլոր յերկրներում, ընդհանուր և միացյալ պայքար մղելու մարդը մարդու ձեռքով շահագործելու դեմ, ընդդեմ մարդկանց ստորաբաժանման, ընդդեմ սեփականատերերի՝ աշխատավորության վրա տիրապետելուն: Դասակարգային գիտակցության այս մթագնումը ձեռնտու յե շահագործողներին և նրանց սպասարկուներին:

ԸՆԴԴԵՄ ԿՐՈՆԻ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ

Սակայն շահագործողների կողմից խաբված մասսան, վոր խեղդված և յեղել սոցիալական ճնշման տակ, բաժան-բաժան արված, փոշիացված, հոմված բնության տարերային ուժերի կողմից, որեցոր ավելի ու ավելի յե ազատվում կրոնական թունից, այդ հաշիշից, վորը թունավորում և նրա գիտակցությունը: «Ստրուկը, վոր գիտակցել և իր ստրկությունը, դադարում և ստրուկ լինելուց»: Բոլոր կրոնների տերտերների և ամեն տեսակի կրոնների դեմ ուղղված այդ պայքարի նախամարտիկները հանդիսանում են բոլոր յերկրների առաջավոր բանվորները, պրոլետարները, վորոնք գործարաններում համախմբվում են արտադրության պրոցեսում, վորոնք մեքենաների միջոցով սովորում են իրենց հնագենդեցնել բնության ուժերը, կազմակերպված՝ դասակարգային պայքարի միջոցով ամուր պահպանել իրենց իրավունքները: Այդ առաջավոր պրոլետարներն են տալիս անատոմածների հիմնական կադրերը, վորոնց շուրջն են համախմբվում կրոնից ավելի ու ավելի ազատվող գյուղացիները:

Մենք, Խորհրդային Միության անատոմածները, հայտարարում ենք, վոր քանի դեռ գոյություն ունի

տարբեր շահերով դասակարգեր, քանի դեռ գոյություն ունեն մարդը մարդուն շահագործելու հնարավորություններ, չեն կարող մեռնել կրոնի արմատները։ Միայն սոցիալիզմը, դասակարգերի կատարյալ վերացումը կարող է տանել դեպի կրոնի կատարյալ մահացումը։ Ահա թե ինչու մենք ԽՍՀՄ-ի անասավածներս սերտ կերպով կապում ենք կրոնի դեմ մղած մեր պայքարը սոցիալիզմի համար մղած պայքարի հետ։ Դա միլիոնավոր մասսաների պայքարն է։ Ամեն մի տարի նորանոր միլիոններ պետք է համակվեն այն գիտակցությամբ, որ միայն այդ ճանապարհով, մարդուն դասակարգային ճնշումից լիովին ազատելու ճանապարհով կարելի է մարդուն կատարելապես ազատագրել բնության տարերային ուժերի նկատմամբ ունեցած սոնդոկանությունից։

ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ

Մենք կապում ենք մեր պայքարը մեր ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման, մեր նոր կենցաղի վերակառուցման համար տարվող պայքարի հետ։ Մենք պետք է կռվենք հանուն այն բանի, որպեսզի ոչ միայն մեր յերկրում, այլև բոլոր յերկրներում հաղթանակի սոցիալիզմը։ Այն ժամանակ կարկուտ և անձրև, յերաշտ ու յերկրաշարժ, անբերրիություն ու սով, պատերազմ և վարակիչ հիվանդություններ ուղարկող աստվածների մասին, սրբերի մասին հեքիաթները կկորցնեն իրենց ուժը։ Որովհետև բնության ուժը կանձահարվի ազատագրվող աշխատանքի կազմակերպված կամքով, որովհետև բնության ուժերը կդադարեն խորհրդավոր ուժ լինելուց-մասսանե-

րի համար, հասարակական հարաբերություններից կնկնեն ամեն տեսակի պաճուճանք: Եվ այդ հարաբերությունները կլինեն աշխատավորության ամենապարզ աշխատանքի, գիտության, իրենց բոլոր ընդունակությունները զարգացնելու և կարիքները բավարարելու նկատմամբ ունեցած իրենց հավասար իրավունքներով:

Մեր դենքը մասսաների կազմակերպումն ու լուսավորությունն է: Մենք գիտենք, որ կրոնը պահպանել է տակավին, այժմ էլ հաճախ պահպանում է իր գոյությունն աղքատության և խավարի միջոցով: Մեր դենքը պայքարն է աղքատության ու խավարի դեմ: Մենք պետք է աշխատավորական բոլոր մասսաների առջև բաց անենք կրոնի դասակարգային սոցիալական արմատները, որպեսզի ամեն մեկը տեսնի, որ կրոնական կազմակերպությունների աշխատանքի յետևում կանգնած են շահագործող դասակարգերը, շահագործող խմբակները, որոնց անհրաժեշտ է կրոնը: Մեր դենքը գիտականորեն դրված, լավ կազմակերպված կուլտուր-լուսավորական աշխատանքն է, որն ուղղված է նրան, որպեսզի հասարակական և բնության յերևույթները բացատրվեն մարքսիստորեն, լենինյան իմաստով:

ՄԵՐ ԳՈՐԾԸ ԿԱՊՎԱԾ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԵՏ

Մենք կամավոր կազմակերպություն ենք: Մենք վոչ վոքի վրա չենք բռնանում, մենք վոչ վոքի չենք հարկադրում անասուած լինելու: Մենք գործում ենք ԽՍՀՄ-ի սահմաններում, հենվելով խորհրդային սահմանադրության, յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց առանձնացնելու դեկրետի հիման վրա:

Մենք պետք է կազմակերպվենք այդ դեկրետի և խորհրդային այլ որենքների հիման վրա, որոնք վորոշում են մեր վերաբերմունքը դեպի կրոնական կազմակերպությունները ու հակահեղափոխական պրոպագանդը: Անհրաժեշտ է, որ հակակրոնական պրոպագանդը Խորհրդային ամբողջ Միության մեջ տարվի ազատ, որպեսզի նրան մատնակցություն ցույց տան հասարակական այն կազմակերպությունները, որոնք իրենց առաջ սոցիալիստական շինարարության խնդիր են դրել: Մեր աշխատանքը մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման ընդհանուր աշխատանքի մի մասն է:

Մենք կոչ ենք անում մեր կոմունիստներին, որպեսզի համառորեն աշխատեն այդ խնդրի վրա: Այդ աշխատանքի համար պահանջվում է տոկունություն: Մենք, անաստվածներս, պետք է սոցիալիզմի առաջավոր կառուցողների որինակ լինենք: Մենք պետք է համբերությամբ պարպաբանենք ամեն մի ոգևոր, կարիքից ճնշված մարդու, որ կրոնը վոչ միայն չի կարող նրան որևէ փրկություն բերել, այլ և կրոնը խոշընդոտ է հանդիսանում մասսաներին կարիքից, աղքատությունից, խավարից, անհավասարությունից, չահագործումից, ազգային թշնամանքից, պատերազմից ազատագրելու ճանապարհին:

ԱՐՇԱՎԻ ՑԵԼՆԵՆՔ ՀԱՆԴԳՆԱՑԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Համբերությամբ բացատրական, գիտական-լուսավորական հակակրոնական պրոպագանդա մղելով, մենք պետք է վճռական հակահարված տանք ամեն տեսակի հեգևորականության յուրաքանչյուր այն փորձին, որով ուզում են ոգտագործել մեր դժվարությունները,

մասսաների անբավականությունն իրենց հակահեղափոխական նպատակների համար, այդ անբավականությունը հրահրելու համար: Մենք պետք է ցույց տանք կրոնի, ԽՍՀՄ-ի մեջ գտնվող կրոնական կազմակերպությունների հակահեղափոխական էությունը, վորոնք ժամանակին ոժանդակել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությանը, վորոնք հեղափոխության սկզբնական շրջանում հարել են հակահեղափոխական կազմակերպություններին, վորոնք այժմ էլ, սոցիալիստական շինարարության շրջանում պայքարում են սոցիալիստական վերակառուցման դեմ, իրենց շուրջը հավաքելով բոլոր հակախորհրդային կուլակային-նեպմանական տարրերին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

Մենք ուշադրություն ենք դարձնում ամենից առաջ յերեխաների վրա, նրանց կրոնական կազմակերպությունների ազդեցությունից պոկելու, նրանց գլուխները թունավորող կրոնական թույնից ազատագրելու անհրաժեշտության վրա: Մենք կարևոր ենք համարում, վորպեսզի խորհրդային դպրոցը պատշաճորեն տա այնպիսի դաստիարակություն, վորը հոգևորականությանը զրկի աճող սերնդին տիրելու հնարավորությունից: Մենք դիմում ենք դպրոցական աշխատավորներին և իրենց, աշակերտներին, վորպեսզի նրանք հակահարված տան կրոնական ամեն մի պրոպագանդի, վորտեղից էլ նա գալու լինի: Անասավածների ամենայերիտասարդ սերնդի, պիոներների վրա մենք պատվավոր պարտականություն ենք դնում պայքարելու կրոնական խաբեության դեմ: Կոմյերիտմիությունը, վորը

հանդիսանում է սոցիալիստական վերակառուցման գործում նախաձեռնողը, որը ցույց է տվել, որ ինքը կարող է մասսայական աշխատանք տանել սոցիալիստական մրցակցության գործում, կուլտուրական հեղափոխության գործում, պետք է և այստեղ մոբիլիզացիայի յենթարկի իր բոլոր ուժերը, ե՛լ ավելի մասսայական աշխատանք տանելու համար: Պետք է լինի վոչ մի կոմյերիտական, չպետք է լինի վոչ մի կուսակցական, վոչ մի դասակարգայնորեն դիտակից պրոլետար, պրոֆմիության անդամ, որը հակակրոնական պրոպագանդ չմղի: Մենք գտնում ենք, որ այդ աշխատանքը պետք է լինի մասսայական, սիստեմատիկ, ամենորա, որ նա պիտի տարվի ամեն մի առիթով և վոչ թե մի վորևե կրոնական հատուկ մոմենտի, տոնի և այլն առթիվ:

Այդ պրոպագանդն առանձնապես պետք է ուղղված լինի գյուղացիական մասսաներին: Դրա հետ միաժամանակ մենք կոչ ենք անում անասուածներին յուրաքանչյուր ոչյալ չրջանում հաշվի առնել մասսաների, մանավանդ գյուղացիական մասսաների զարգացման աստիճանը և մանավանդ այն ազգությունների առանձնահատկությունները, որտեղ կրոնամոլությունը դեռ չափից դուրս ուժեղ է: Մենք դեմ ենք հավատացյալների դիտավորյալ, կոպիտ վիրավորանքին:

ՀԱՆԵԼ ԿՐՈՆԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑԻՑ

Մենք կոչ ենք անում հատուկ ուշադրություն դարձնել կանանց մեջ տարվող հակակրոնական աշխատանքի վրա: Մենք հիշեցնում ենք այն մասին, ինչպես կրոնական ուսմունքները պաշտպանելով նախկին դարերի

կապիտալիստական հասարակության շահագործման հարաբերությունները և հասարակակարգը պահպանում են և սարկական վերաբերմունքը դեպի կինը, և ձգտում են հավերժացնել կանանց սարկությունը նաև ԽՍՀՄ-ում, պրոլետարական դիկտատուրայի ներքում։ Կրոնական մի շարք դոգմաներ և վորոշումներ հավատացյալների մեջ կնոջը դնում են այնպիսի դրության մեջ, վոր իբր նա անմաքուր էյակ է։ Դրա հետ միասին կրոնական կազմակերպությունները ոգտագործում են կնոջ հատուկ դրությունը, նրա տնտեսապես կախված լինելը, նրա սոցիալական ճնշվածությունը, նրա խավարամտությունը և հետամնացությունը, վորպեսզի նրան դարձնեն իրենց պրոպագանդի գործիքը, իրենց գործունեության դենքը, և նրա միջոցով ազդեն յերեխաների, ընտանիքի և հասարակության վրա։ Կրոնը ամենամեծ խոչընդոտն է հանդիսանում կնոջ ազատագրման ճանապարհին։ Դրա համար մենք կոչ ենք անում մեր կողմնակիցներին, վորպես առանձին կարևորություն ունեցող խնդիր,—լավ հիմքերի վրա դնել հակակրոնական աշխատանքը կանանց մեջ։

ՄԵԶ ՈԳՆԵԼՈՒ

Մենք կոչ ենք անում գիտության և տեխնիկայի մարդկանց, գեղարվեստի աշխատողներին ոգնության հասնել մեր աշխատանքին։ Դրանց լավագույն մասն արդեն մասնակցում է մեր աշխատանքներին։ Բայց դրանցից շատերը իրենց ամբողջ անցյալով, կրթությամբ, յերբեմն և ծագումով կապված են հեղափոխության կոպ մից ջախջախված դասակարգերի հետ, հեռու յեն կանգնած մեր պայքարից։ Նրանք պետք է իմանան, վոր կրոնի տիրապետությունից ազատագրված մասսա-

ները հսկայական քայլերով դեպի առաջ կգնան պար-
զացման ճանապարհով, ճիշտ կտիրապետեն գիտու-
թյան և տեխնիկայի ավյալներին, կստեղծեն մի հասա-
բակակարգ, որը կապահովի աշխարհումս գիտական
պարզացման դեռ չտեսնված թափ, մարդկության պատ-
մության մեջ տեխնիկայի դեռ չտեսնված կորով, կվե-
բափոխեն յերկրագնդի մի վեցերորդ մասը:

Մենք կառուցում ենք մեր աշխատանքը սոցիալիս-
տական շինարարության հնգամյա պլանի ավելի լավ
իրագործման համար: Մենք մեր աշխատանքի բոլոր
ծրագիրը պետք և կապենք սոցիալիստական շինարա-
րության մեր պլանի, մեր հնգամյակի հետ և համոզ-
ված ենք, որ Անասավածների Միությունը կլինի այն
ջոկատներից մեկը, որն ամեն կերպ կողնի հնգամյա
պլանի իրացմանը:

ՀԱՆՈՒՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՈՒԹՅԱՆ

Անասավածների Միությունը չի ներփակվում Սով-
հրդային պետության շրջանակներում: Նա, ինչպես և
մեր մյուս հասարակական կազմակերպությունները,
համակված և բոլոր յերկրների աշխատավորության
միջև միջազգային միություն, միջազգային յեղբայ-
րություն ստեղծելու անհրաժեշտության գիտակցու-
թյամբ:

Կրոնը բաժանել և բոլոր աշխատավորությանը կա-
թոլիկների, բողոքականների, հրեաների, մուսուլ-
մանների, բուդդիստների և այլն: Կրոնը ատելություն
և հրահրում այդ կազմակերպությունների միջև: Մենք
կոչ ենք անում ստեղծելու աշխատավորության միջազ-

դային միասնություն։ Մեր Միության մեջ մենք ընդգրկում ենք առանց ցեղի, ազգության խտրության բոլոր աշխատավորներին, միասնական հզոր Անաստվածների, աթեիստների հակակրոնականների Միության մեջ։

Մենք կոչ ենք անում բոլորին, ովքեր կտրել են իրենց կապերը շահագործող դասակարգերից, նրանց կրոնական կազմակերպություններից, գործով ասել այդ մասին, բացահայտ կերպով խզել կապերը յեկեղեցական կազմակերպություններից և կրոնական համայնքներից։

Մեր շարժումը ինչ-վոր նեղ աղանդի շարժում չե։ Ենթե ներկայումս մեր միությունում հաշվում են մեկ միլիոն անդամներ, ապա այդ միլիոն կազմակերպված անաստվածները հանդիսանում են անհավատների բազմամիլիոն մասսաների առաջավոր ջոկատը, авангардը, վորոնք դեռ կազմակերպված չեն։ Մեր առաջ մենք խնդիր ենք դնում ի մի հավաքել, համախմբել այդ միլիոնները, տարեց-տարի աճող այն բոլորի հաշվին, վորոնք գիտակցելով կրոնի վնասակարությունը, անցնում են անաստվածների շարքերը։

Մենք ինտերնացիոնալիստներ ենք։ Մեր թշնամիները վոչ միայն տերտերներն են, բալիները, մոլաները, կոյոնձները, լամաները և կրոնի այլ սպասավորները մեր յերկրում. այլև մեր թշնամիներն են,— թագավորները, հոգեվորականությունը. կապիտալիստական հանրապետությունների նախագահները, ֆաշիստները, կալվածատերերը, կապիտալիստները և ամեն յերկրի, ամեն ազգության և ամեն տեսակի շահագործողները։ Մենք մտնում ենք պրոլետարական ազա-

տամիտների Ինտերնացիոնալի մեջ, բոլոր յերկրների կրոնի դեմ պայքարող մարդկանց միացնող այդ կազմակերպության մեջ։ Այդ Ինտերնացիոնալում մենք պետք է պայքարենք դասակարգային պայքարի հետևողական գծի համար։ Մեզ համար հակակրոնական ճակատում մղած պայքարը հանդիսանում է այն դասակարգային-քաղաքական պայքարի ձևերից մեկը, որը և աշխատանքը կապիտալի դեմ։

ՄԵՆՔ ԴԵՄ ԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ ՑԵՎ ԴԵՄ ԵՆՔ ԿԱՊԻՏԱԼԻՆ, ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿՈՂՄՆ ԵՆՔ։

Մենք անկրոն հասարակակարգի կողմն ենք, հասարակակարգ որտեղ իշխում է աշխատանքը, որտեղ չկան դասակարգեր, որտեղ մարդիկ արյունալի պատերազմներ չեն մղում, որտեղ նրանք հանդիսանում են աշխատանքի յեղբայրներ։

ԽՍՀՄ-ի Անասավածների Միության մեր դրոշի տակ ենք կանչում բոլոր բանվորներին, գյուղացիներին և կարմիր բանակայիններին, մենք կանչում ենք բոլոր աշխատավորությանը։

ՊԱՑԿԱՐԻ ՆՈՐ ԾՐԱՆ

(Անասավածների Համամիութենական 2-րդ համագումարում ընկ. Ցարապավսկու արտասանած ճառից)

ԿՐՈՆԸ ՄԻՆՉ 1917 ԹՎԻ ՀԵՂԱՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱՆԻՑ ՀԵՏՈ

Մինչև 1917 թվի հեղափոխությունը մենք քիչ ուշադրություն ենք նվիրել հակակրոնական պրոպագանդին։ Բայց մեր տեսակետը պարզ և յեղել։ Լենինը բազ-

մեցս իր մի շարք աշխատությունների մեջ, սկսած 1905 թվից, ձևակերպել է մեր, բայլշևիկների–կոմունիստների, վերաբերմունքը կրոնի վերաբերյալ,— որպես անհաշտ թշնամական ամեն տեսակի կրոնի նկատմամբ: Այդ ժամանակ սոցիալ–դեմոկրատները հարցը դնում էին այսպես, որ կրոնը մասնավոր գործ է և մեկնաբանել են այդ վոչ միայն դեպի պետությունը ունեցած վերաբերմունքի իմաստով, այլ և այնպես, որ սոցիալ–դեմոկրատական կուսակցության ամեն մի անդամի համար կրոնը մասնավոր հարց է և, սոցիալ–դեմոկրատական կազմակերպության ամեն մի անդամ ինքն է վորոշում այն հարցը, թե՞ արդյոք լինել յեկեղեցում, թե պայքարել յեկեղեցու դեմ: Մենք կանգնած ենք այս տեսակետի վրա, որ մեր կուսակցությունն իր խնդիրներից մեկն է դնում հակակրոնական պրոպագանդը, պայքարը յեկեղեցու դեմ, պայքարը կրոնի, նրա բոլոր տեսակների դեմ:

Յերբ մեր ընկերների մեջ այդ հարցի վերաբերյալ առաջին է յերկրորդ հեղափոխությունների միջև տեղի ունեցած ռեակցիայի շրջանում առանձին ընկերների մեջ յեղան տատանումներ, յերբ մեր կուսակցության մոտ կանգնածներից վոմանք դիմեցին նոր, սոցիալ–դեմոկրատական կրոնի, «սոցիալիզմի կրոնի» վորոնումներին, հանդես յեկան այսպես կոչված աստվածաշինարարներ ու աստվածավորողներ, Լենինն անխնա, ամբողջ թափով հարձակվեց նման ձևի տատանումների դեմ և մեր կուսակցության ճնշող մեծամասնության կողմից նա աջակցություն ստացավ: Բայց վորպես հատուկ հակակրոնական պրոպագանդի համար ուժեր հատ-

կացնելու խնդիր—մենք այն ժամանակ չենք դրել մեր առաջ:

1917 թվին Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ բանվոր գասակարգն իր ձեռքը վերցրեց իշխանությունը, նա պետք և դներ այդ հարցն իր ամբողջ ծավալով: Հրատարակվեց դեկրետ յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց անջատելու մասին: Այսպիսով հիմք դրվեց այն բանին, որպեսզի պայքարը յեկեղեցու և կրոնի դեմ մղվի ավելի պլանաչափ: Այն ժամանակ յեկեղեցին դուրկ եր դլխավոր հենարանից, պետության ժանդակությունից: Յեկեղեցին դուրս յեկավ հեղափոխության դեմ: Յեկեղեցին պատրիարք Տիխոնի գլխավորությամբ որհնեց Խորհրդային Իշխանության դեմ կազմակերպած հակահեղափոխական ապստամբությունը: Այդ շրջանում մենք ստիպված եյինք յեկեղեցու դեմ պայքարել այլ միջոցներով: Հակակրոնական պրոպագանդը յետ եր քաշված վերջին տեղը, և դենքը ձեռքին Խորհրդային Իշխանության դեմ դուրս յեկած կրոնի դեմ, մենք նույնպես պայքարում եյինք դենքով: Մեր դեմ եյին դուրս յեկել հիսուսյան գնդը, մեր դեմ միանգամայն բացահայտ կերպով դուրս եր յեկել կրոնական հակահեղափոխությունը, դաշնակցած գեներալական բանդաների հետ: Յեվ հասկանալի յե, որ հեղափոխության ուրը չի խնայել այն բոլորի գլուխները, ովքեր կարծել են, որ կարող և խաչը մի ձեռքում, հրացանը մյուսում պաշտպանել կալվածատերերի և կապիտալիստների շահագործման և տարկայման իրավունքը:

Մեծ դժվարությամբ եր մեզ հաջողվում այն ժա-

Գիրք 24519

մանակ ուժեր հատկացնել հակակրոնական պրոպագանդի համար։ Այն ժամանակ մենք տարված եյինք բոլորովին այլ ավելի սուր խնդիրներով և այլ ճակատներում։ Սիստեմատիկ հակակրոնական պրոպագանդը,—փաստորեն վերջին տարիների գործ է։ Եթե մենք մի առ մի աչքի անց կացնենք կոմունիստական կուսակցության վորոշումները, ապա բացի այնպիսի փաստաթղթից, ինչպիսին կուսակցության ծրագիրն է, վորը մշակված եր ութերորդ համագումարում։ Միայն 1921 թվին ունենք մենք կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի առաջին շրջաբերականը հակակրոնական պրոպագանդի մասին։ Հիշեցնելու համար, թե ինչպիսի փաստ տեղի ունեցավ այն ժամանակ, բերեմ միայն մի դեպք.

Կալուգայի նահանգում մի յերիտասարդի կուսակցությունից վտարել են նրա համար, վոր նա զատկին, առավոտյան ժամերգությունից առաջ պատել է փողոցով և նվագել գարմոշկայի վրա։ Դրանով նա վիրավորել է հավատացյալների զգացմունքները։ Այդպես եր հասկացվում մեր կուսակցության ծրագրի այն կետը, թե չպետք է վիրավորել հավատացյալների զգացմունքները։ Մյուս կողմից յեղել են հակառակ փաստեր, յերբ ամենակոպիտ և ամենաանտակտ կերպով հարձակվել են հավատացյալ մասսաների վրա։ Մեր կուսակցության 12-րդ համագումարում մենք նորից դրինք հակակրոնական պրոպագանդի խնդիրը։ Այդ հարցն այն ժամանակ արդեն իսկ ընդունեց վորոշումների ավելի վորոշակի ձև՝ հակակրոնական սիստեմատիկ պրոպագանդի վերաբերյալ։ Դա մի փորձ եր հակակրոնական պրոպագանդն առաջ քաշելու, վորպես մասսայական աշխատանքի խնդիր։ Մի շարք մանրամասն ցուցումներ տրվ-

վերջին հակակրոնական թե՛ բանավոր և թե՛ տպագիր ագիտացիայի և պրոպագանդի ձևերի, բովանդակության և մեթոդների մասին: 13-րդ համագումարը նույնպես կանգ առավ գյուղում տարվելիք հակակրոնական աշխատանքի հարցի վրա: Տրվեց բոլորովին պարզորոշ ցուցումներ, որ մեր գլխավոր խնդիրն է գյուղում յեկեղեցու ազդեցության, կրոնական կազմակերպությունների ազդեցության դեմ պայքարի խնդիրն է ոչ թե վարչական միջոցներով, այլ խորացրած հակակրոնական պրոպագանդով, որը պետք է գլխավորապես ուղղված լինի հասարակական և բնության զանազան յերևույթների բացատրելու մատերիալիստական պարզաբանությանը:

ՄԵՐ ԹՈՒԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինչո՞ւ առաջին տարիներն այդպես դանդաղ եր գընում մեր միության աճումը: Ինձ թվում է, որ գլխավոր արմատական պատճառը գարձյալ նրանումն է, որ շատ կազմակերպություններ այժմ ել առաջվա պես կարելոր չեն համարել հակակրոնական պրոպագանդի հարցն առանձնացնել որպես մի խնդիր, որի վրա ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել, քան յեղել է այդ մինչ այժմ: Արդեն գոյություն են ունեցել կուսակցության վորոշումները, բայց իներցիայով, ինչպես ասած, ըստ սովորության, մեր կազմակերպություններից շատերը շարունակել են ձևական վերաբերմունք ցույց տալ այդ գործին: Կա կուսակցության վորոշումը և նույնիսկ ծրագրում կետ կա այն մասին, որ կուսակցության ամեն մի անդամ պետք է հակակրոնական պրոպագանդ մղի:

Բայց և այնպես յեթե մենք հարցնելու լինենք ամեն մի կուսակցականի, արդյոք նա մղում է հակակրոնական պրոպագանդ, ինարկե կպարզվի, վոր շատ աննշան մասն է հակակրոնական պրոպագանդ մղում նույնպես պարտականություն կարծես թե գոյություն ունի և կոմյերիմիության մեջ: Բայց այնտեղ ևս գործը լավ չե: Նույնիսկ պիոներական նոր կանոնադրությունն ասում է այն մասին, վոր պիոները պետք է պայքար մղի կրոնի դեմ: Յեթե իմ գումարելու լինենք կոմունիստների, կոմյերիստականների և պիոներների ամբողջ մասան, ապա կստանանք մի քանի միլիոն ագիտատորներ և պրոպագանդիստներ: Յեթե իսկապես, ամեն մեկը, վոր խոսել է իր կապերը կրոնից գիտակցի իր խնդիրը, թե ինքը պարտավոր է հակակրոնական պրոպագանդ մղելու, այն ժամանակն, ինարկե, այդ գործը բոլորովին այլ դրության մեջ կլինի: Բայց դրան մենք դեռ չենք հասել: Կուսակցականների, կոմյերիստականների միջից շատ աննշան մասն է ուշադրություն դարձնում այդ գործի վրա, այն էլ ինչպես ասում են, հակակրոնական պրոպագանդի մասին հիշում են մեծ տոների: Դրա համար շատ դանդաղ է աճել անկուսակցական ակտիվը: Անկասկած մենք ունենք զգալի չափով անկուսակցական հակակրոնական ակտիվ: Յեթե ճիշտ կերպով հաշվելու լինենք կրոնից և յեկեղեցուց իրենց կապերը խզած անհավատներին, ապա կստացվի վոչ այն թիվը, վորի մասին խոսել է ընկեր Բուխարինը: Նա ասել է, վոր մեկ անհավատի ընկնում է հարյուրավոր հավատացյալներ: Յեթե իրոք այդպես լիներ, այն ժամանակ, ի հարկե, պետք է ընդունեյինք, վոր կոմունիստների և կոմսոմոլիստների մեջ նաև հավատացյալներ կան: Միայն կո-

մունիտները, կոմբինատները ու պլանները, միասին կկազմեն մի բանակ, որը բաղկացած է ավելի քան 5 միլիոն հոգուց։ Շատ կոպիտ հաշվով անգամ, կարծում եմ, կրոնից իրենց կապերը խզածների թիվը մեր յերկրում 10 միլիոնից պետք կանցնի։ Յեթե ընկեր Խուսարինը խոսում է անհավատների ակտիվիստների մասին, այդ ուրիշ բան է։ Հարցը ներկայումս նրանում է, որ 10 միլիոնից պետք է առանձնացնել վոչ թե տասը հազար, հարյուր հազար, այլ 1–2 միլիոն հոգուց բաղկացած հակակրոնականների ակտիվ վորոնք լուրջ ուշադրություն դարձնեին հակակրոնական պրոպագանդի և ագիտացիայի վրա։

Այդ գործը մեզ մոտ շատ թույլ դրված լինելու մյուս պատճառն աշխատանքի փորձի և սովորության բացակայությունն է։ Մենք ստիպված ենք գործ ունենալ մի այնպիսի թշնամու հետ, որը դարերի ընթացքում կլուսած փորձ ունի, վորպիսին մենք չունենք։ Մենք դիմում ենք հակակրոնական պրոպագանդի, յերբեմն բոլորովին չիմանալով, թե ինչպես պետք է մոտենալ այդ գործին, և շնորհիվ դրան մենք շատ ու շատ սխալներ ենք անում։

Ինչ է յեկեղեցական փորձը։ Դա աշխատավոր մասսաներին հիմարացնելու և ապշեցնելու հազարավոր տարիների փորձն է։ Այստեղ մշակված են գաղափարների մի ամբողջ սիստեմ, ձևեր, ֆորմուլաների մի ամբողջ սիստեմ, վորոնք յերբեմն վորքան անհասկանալի յեն լինում, այնքան շատ են ազդում մասսաների վրա։ Նրանք ունեն և նյութական միջոցներ, վորպիսին մենք չենք ունեցել առաջին տարիներում և դեռ այժմ էլ չունենք։ Փաստն այն է, որ այնուամենայնիվ մեր յերկ-

բում դեռ կան 50 հազար յեկեղեցի։ Վորչափ տարբերինակ է այդ, բայց և այնպես այսոր ինձ, Անատոված-ների միության նախագահիս, մի պատավ կին դիմում է այսպիսի հարցով, թե ինչպես անել, վորպեսզի կառնցնի Մուրոմսկի յեկեղեցու փակումը։ Նա ասում է, վոր իրենք ունեն 17 յեկեղեցի, վերցրեք ասում է նա 15-ը, իսկ յերկուսը թողեք մեզ։ Իսկ դուք ուզում եք մեծերը վերցնել իսկ մեզ թողնել փոքրերը։ 50 հազար մեծ ու փոքր յեկեղեցիների թվում կան այնպիսի փառահեղ շենքեր, վոր ավելի լավ են, քան այս դահլիճը։ Շքեղ արվեստ, յերբեմն առաջնակարգ նկարիչների արվեստ։ Չե՞ վոր այդ բոլորը զգայական ազդեցության միջոցներ են յեկեցականների ձեռքում։ Հնագույն արվեստը վորքան անհասկանալի յե, այնքան նա ուժեղ է գործում յերևակայության վրա։ Ատածու այդ սև սեռքի տակ առանձին մի գաղտնի ուժեր են թաղնված հավատացյալ մարդու համար,— մարդիկ համբուրելով մաշել են այդ ատածու մի քանի պատկերները, ծակեր առաջացնելով դրանց վրա։ Ցեվ յերեսի վրա կարծես խոցեր են ստացվում։ Որինակի համար այդպիսի պատկերներ կան Կարմիր Պրեսնայում և հազարավոր մարդիկ համբուրում են այդ խոցերը, վորոնք գոյացված են խաբվածների ու խաբողների մարդկային մատաչի համբույրներից։

Յեկեղեցին ունի իր յերգեցիկ խումբը, դարերով մշակած իր նվագածության գործիքները։ Շատ քիչ կարող եյինք հակադրել դրանց առաջին տարիները, վորովհետև մեր ագիտացիոն և պրոպագանդիստական ուժերը թույլ եյին։ Մեր ագիտատորները և պրոպագանդիստները չեյին ճանաչում իրենց թշնամուն, նրանք

հաշվի չեն առել նրանց կազմակերպության ուժը, դարձյալ ապրելության ուժը, ուժերը, որոնց ոգնությամբ յեկեղեցին կառչել և մասսաներից: Մենք նույնպես չենք ունեցել համապատասխան գրականություն, մենք թույլ եյինք կարողանում հակադրել հոգևորական գրականության մեր հակակրոնական և թարգմանչական գրականությանը: Այդ գրականությունը վատորակ գրականություն եր: Իզուր չե, որ Լենինը «Պոդ գնամենեմ մարքսիզմա» ամսագրում, խոսելով այդ ժուրնալի խնդիրների մասին, հարց եր դրել այն մասին, որ մենք պետք և զբաղվենք արտասահմանյան գրականության թարգմանությամբ, հրատարակենք 18-րդ դարու աթեիստների գրվածքները, որ մենք պիտի ոգտագործենք մեր դասակարգային կիսաթշնամիների, կիսադաշնակիցների գրականությունը: «Պոդ գնամենեմ մարքսիզմա» ամսագրի առաջնորդում նա իսկհուրդ եր տալիս, որոշ «դաշինք» ունենալ կրոնի այնպիսի պատմաբանի հետ, ինչպիսին և Արատուր Դրեվսը, ոգտագործելով քրիստոնեական առասպելաբանությանը վերաբերող նրա քննադատությունը: Ճիշտ և մեզ մոտ կան ծայրահեղ հեղափոխականներ, որոնք այդ նույն առասպելաբանությունն ուսումնասիրելու փորձը համարում են դադար փրփրելու գործ, բայց յես կարծում եմ, որ այդ հարցում արդարացի յեր Լենինը և ոչ թե նրանք:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յես ցանկանում եմ փորոշ չափով կանգ առնել այն մասին, թե ներկայումս ինչ պայմաններում ենք ստիպված աշխատելու: Հեղափոխության առաջին շրջանում,

1917—21 թվերին, երբ քաղաքացիական կռիվները դեռ չէին վերջացած, մենք գործ ունեցինք կալվածատերերի և կապիտալիստների, քաղաքացիական պատերազմները կազմակերպիչների հետ: Ահա թե դասակարգային ինչպիսի թշնամիներ եկան դուրս յեկել մեր դեմ: Այն ժամանակները յեկեղեցին մեր այդ թշնամիների ակնհայտ արտահայտիչն եր: Բայց մենք ջախջախեցինք այդ դասակարգերին: Կապիտալիստների և կալվածատերերի միայն խղճուկ մնացորդներն եին մնացել: Այդ դասակարգերին, վորպես հետևողներ, դուրս յեկան գյուղում կուլակները, քաղաքում նեպմանները: Ճիշտ է, նախկին դասակարգերի այդ մնացորդները, վորոնք այս ու այնտեղ դեռ պահպանում են իրենց գոյությունը,— մերվում, գողվում են այդ կուլակային և նեպմանական շերտերի հետ, նրանք ամենուրեք գործում են միատեղ, ուր կարողանում են, համենայն դեպս, յեկեղեցական խորհուրդների և աղանդավորական կազմակերպությունների մեջ նրանք դիկավարող տեղ են գրավում: Այժմ մենք ստիպված ենք գործ ունենալ վոչ թե մի քանի տասնյակ հազարավոր կալվածատերերի և կապիտալիստների հետ, այլ առնվազն 3—4 միլիոն կուլակների հետ, և այդքան էլ այսպես կոչված «յենթակուլակների» այսինքն՝ նրանց մտերիմ կանգնած մարդկանց հետ: Մի քանի միլիոն կրոտացվի, յեթե վերցնելու լինենք քաղաքներում բոլոր նրանց, վորոնք ձգտում են, վորպեսզի կրոնը դարձնեն Խորհրդային Իշխանության դեմ պայքարելու գործիք: Ցեռ կարծում եմ, վոր մենք գործ ունենք մոտավորապես 10 միլիոնանոց դանգվածի հետ, յեթե վերցնելու լինենք վերնաշերտը, վորը կազմում է կրոնական կալ-

մակերեսությունների հիմքը: Նա ջոկում է իր ակտիվը, յեկեղեցական խորհուրդների այսպես կոչված բանալիները: Յեւ ճշտորեն չգիտեմ, վորքան են նրանք, բայց մենք կարծում ենք, վոր յեկեղեցու միլիոն ու կես անդամները կազմում են այդ ակտիվը, դրանց թվում հաշված է յեկեղեցու ծառայողները: Մեզ մոտ չկան բացարձակ գործող վոչ կազմների, վոչ մենշեիկների, վոչ եսերների կուսակցություն, բայց մենք ունենք կրոնական կազմակերպությունների մեջ կազմակերպված խավարապաշտների կազմակերպություն, վորոնք հնարավորություն ունեն քարոզելու ամենահետադիմական գաղափարները, իսկական միջնադարյան և նույնիսկ ավելի հին ժամանակների սատանայություն, իրենց ագիտ-պրոպների միջոցով ամեն որ այդ վոգով դաստիարակել մասսաները, ոգովորելով իրենց քահանա-քարոզիչների շատ վորակյալ ուժերով, ոգովորելով ներգործման, այն և գեղարվեստի, նվագածության, կենդանատրության, անդրիադրծների մեծ ապարատով: Այսպիսով յեկեղեցականների այդ ռեակցիոն կուսակցությունը ներգործում է շատ լայն մասսաների վրա: Բայց մենք պետք է տարբերենք քաղաքականապես ծայր աստիճան ռեակցիոն այդ վերնաշերտը, վորը դիտե թե ինչի յե ձգտում և յերբեմն կապված է արտասահմանյան կապիտալիստական կազմակերպությունների հետ, և աշխատավորության այն մասային, այսպես կոչված հավատացյալներին, վորոնք գտնվում են նրանց ազդեցության տակ: Դրանք հակահեղափոխականներ չեն, դրանք այնպիսի բանվորներ և գյուղացիներ են ինչպես և նրանք, վորոնք, դասակարգայնորեն և քաղաքականապես ավելի գիտակից դառնալով, մտնում են

կուսակցության մեջ, կոմունիստության մեջ, պրոֆ-միության չարքերը։ Բայց նրանց դասակարգային դիտակցությունը դեռ նվազ է, Լենինի խոսքերով ասած՝ բիչ է «կուլտուրականությունը»; ազատագրելու համար կրոնի ազդեցությունից։ Հաճախ «միայն անկուլտուրականությունը» խանգարում է կրոնի ազդեցությունից ազատագրվելուն։ Ցեռ չեմ ասում, որ անկուլտուրականությունը գլխավոր պատճառն է, որ մասսաները չեն կարողանում ազատվել կրոնից։ Կրոնի արմատները միայն անկուլտուրականության մեջ չեն։ Դրանք գլխավորապես սոցիալական արմատներ են։ Այդ արմատները նաև նրանում են, որ մասսաները գտնվում են բնության՝ իրենց համար դեռ անհաղթելի տարերքի ազդեցության տակ։ Այնուամենայնիվ, յեթե վերցնելու լինենք գյուղացիական մասսան, որը գիմում է հաքիմների, փալչիների, վհուկների և տերտերների ոգնության՝ անասունների ցավի, անբերրիության ժամանակ, նույնիսկ այն ժամանակ, յերբ հորթ եվ կորչում է, գիմում են վհուկին, որպեսզի նա գուշակի, թե որտեղ է կորել հորթը,— ապա մենք կտեսնենք, որ անկուլտուրական լինելը դեռ խոշոր դեր է կատարում։

Ցեվ այստեղ մեր դեմ ծառանում է յերկու խնդիր։ Մի կողմից՝ ոգնել այդ մասսաներին ազատագրվելու սոցիալական ճնշումից, պարզել նրանց առաջ կրոնի սոցիալական արմատները, ցույց տալ, թե ինչ կապ կա յեկեղեցական-կրոնական կազմակերպությունների և շահագործող դասակարգերի միջև, ցույց տալ ինչպիսի կապ գոյություն ունի կապիտալիստական դասակարգերի ռեակցիոն ձգտումների, իրենց «հավատացյալների» և կրոնական կազմակերպությունների գործունեության

միջև։ Մյուս կողմից մեր առաջ խնդիր է դրված դպրոցի, կուլտուր լուսավորական բոլոր հիմնարկների հետ միասին խոշոր աշխատանք տանել։ Առանց այդ վերջին աշխատանքի, առանց կուլտուր-լուսավորական այդ աշխատանքի, ընդգծում եմ Լենինի խոսքերը կուլտուրական աշխատանքի, չի կարելի աշխատանքը լրիվ կատարել։ Այդ մասին առավել ևս տեղին է խոսել այն պատճառով, որ մեզ մոտ դեռ կան ընկերներ, որոնք յերևակայում են, թե իրենք սաստիկ հեղափոխական են, յերբ ընդգծում են կուլտուրականության անպետքությունը։ Այդ վնասակար նախապաշարումների վրա պետք է ավելի մանրամասն կանգ առնել։ Պետք է ուշադրություն տալ, որ այդպիսի նախապաշարումները ներկայումս ռեակցիոն են։ Այլ բան է, յեթե մինչև 1917 թվի հեղափոխությունը մենք քարոզելինք կուլտուրականությամբ զբաղվելու անհրաժեշտության մասին։ Բոլորովին այլ բան է, յերբ այդպիսի կուլտուրականությունը մասսաների մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ քարոզում են կոմունիստական կուսակցությունը և կոմյերիտմիությունը։

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ մեր աշխատանքի այն կողմը, որը բղխում է ներկա մոմենտի հատուկ խնդրից։ Մեր աշխատանքը մենք տարբեր պարագաներում ենք տանում։ Ցեռ մատնանշեցի աշխատանքի մի թափի մասին, որ մենք տալիս ենք մինչհեղափոխության շրջանում։ Մենք այդ ժամանակ հատկապես այնքան էլ չենք զբաղվում հակակրոնական պրոպագանդով։

Հակակրոնական պրոպագանդի այլ ձև և այլ թափ գոյություն ուներ քաղաքացիական պատերազմների

ժամանակ։ Յերրորդ շրջանն էլ այն է, յերբ մենք սկսել էյինք վերականգնել տնտեսությունը, յերբ մենք սկսել էյինք դուրս գալ ավերածությունից, յերբ մի շարք ճյուղերում, ինչպես Լենինն է ասում, անթափ-ցուպերով միայն դուրս յեկանք, այսինքն սովորեցինք ման գալ, չէյինք կարողանում վարել գործերը, բաղ-մաթիվ սիսալներ էյինք տնում։ Հույս ունեմ, որ այդ յերրորդ շրջանը մենք վերջացրել ենք, անցնելով Ա-նասավածների Միության յերկրորդ համագումարին։ Այժմ մենք մտնում ենք նոր, ժողովրդական տնտեսու-թյան սոցիալիստական վերակառուցման շրջանը։ Յես կարծում եմ, որ պետք է տեղի ունենա մեր աշխա-տանքի վորոշ վերակառուցում, մեր շարքերի վերադա-սավորում և կատարյալ համաձայնեցում մեր խնդիր-ների, մեր պայքարի ձևերի և մեթոդների հետ, սոցիա-լիստական շինարարության խնդիրների հետ։

Ի՞նչով է բնորոշվում այս շրջանը։ Բնորոշվում է դասակարգային պայքարի սրվածությամբ։ Կուլակը, վորը մինչև հեղափոխությունը յեկեղեցու յերեցփոխն է յեղել, վորը յեկեղեցին համարել է իր պատսպարանը, այժմ յերբ տրակտորը, կոոպերացիան նրան ավելի ու ավելի յին նեղը գցել, յերբ ամող հասարակայնությու-նը, կուսակցությունը, կոմյերիտմիությունը նրան դուրս են նետում ասպարեզից, յերբ նա ավելի ու ա-վելի յի կծկվել նեղ տարածության վրա, չի ուզում դիջել իր տերիտորիան ատանց մարտի։ Կալվածատե-րը դեներալական հակահեղափոխություն բարձրա-ցրեց նրա համար, վորպեսզի բաց չթողնի ձեռքից իր տիրապետությունը։ Կուլակը դարաններից կրակում է և պիտի կրակի մեր ակտիվ անասավածների վրա, կու-

լակը պիտի խանգարի սոցիալիստական հարձակմանը, կուլակը պիտի խանգարի քաղաքի և գյուղի սոցիալիստական մրցակցությունը, վերընտրական կամպանիայի ժամանակ նա քայքայելու, խանգարելու յե խորհուրդների կոոպերացիայի մեջ հասարակական մեր աշխատավորներին ընտրելուն, նա պետք և քայքայի մեր ակտիվների և խրճիթ-ընթերցարանների հասարակական աշխատանքը, ամեն մի դժվարությունների ժամանակ նա ամեն տեսակ կրոնական կասկածանքներ պիտի սերմանի, պիտի ոգտագործի կրոնական կազմակերպությունները նրա համար, վորպեսզի սարսափեցնի մասսաներին այդ դժվարություններով, վորպեսզի յեկեղեցու և ռեակցիայի դիրքը վերադարձնի մասսաներին: Պետք և նկատի ունենալ այդ և դրան մենք պետք և տանենք, վոր այս շրջանը ծավալված ճակատով հակակրոնական հարձակման շրջան պետք և լինի: Ինչ ձևի կվերածվի հակակրոնական այս հարձակումը, դա այլ խնդիր և, դա պետք և վորոշել: Քաղաքացիական պատերազմների շրջանում մենք կուլակի և կալվածատերերի դեմ գնում եյինք հրացանը ձեռքներիս իսկ յերբ անհրաժեշտ եր նաև տերտերի դեմ, ուր նա ինքն եր գենք բարձրացնում: Իսկ ներկայումս մենք պայքարում ենք այլ միջոցներով, և դրա համար մեր հակակրոնական պրոպագանդն այս նոր պարագայում պետք է ամբողջովին կապված լինի կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականության հետ:

Ցեռ կարծում եմ, վոր ինձ շատ պետք չի կանգ առնել կրոնական կազմակերպությունների ժամանակակից դերի վրա: Յեթե այդ կրոնական կազմակերպություններում կան չքավոր և միջակ գյուղացիներ, իսկ

վորևե տեղ առաջ են քաշվում բանվորներ, նույնիսկ մեծ արտադրական ստաժով, ապա այդ բանը մեզ չպիտի խաբի։ Այդ նշանակում է վոր բանվորների մեջ, գյուղացիների մեջ դեռ ունենք դասակարգայնորեն անգիտակից տարրեր, վորոնք չեն գիտակցել իրենց տեղը դասակարգային պայքարում, մանր բուրժուական տարրերի հետևից քաշ են դալիս պոչում, ներծծված մանր բուրժուական իդեոլոգիայով։ Մենք պետք է պայքարենք այդ տարրերը գրավելու համար։ Մեր դեմ, այդ մարդկանց իրենց ձեռքում պահելու համար, պայքարում է կրոնը։ Ցեկեղեցին իրեն կողմնակիցներ է հավաքում հենց այդ նույն մասսայից, վորոնց մենք պետք է խլենք կրոնական կազմակերպությունների ազդեցությունից, սոցիալիստական պայքարի համար, բանվորներ և գյուղացիներ սոցիալիզմի գործի համար։ Պետք է այդ նկատի ունենալ։ Պետք է նկատի ունենալ, վոր կրոնական կազմակերպությունները հարմարվում են և պիտի հարմարվեն յերկրում տեղի ունեցող սոցիալիստական առաջխաղացմանը։ Մենք վերջերս տպագրել ենք «Անասավածում» յեկեղեցական խորհուրդների կազմը, յեկեղեց. խորհուրդների մի քանիների ազգանունները, յերբեմն էլ յեկեղ. խորհրդի բոլոր անդամների ցուցակը, ցույց տալով այդ խորհուրդների սոցիալական կազմը։ Այնտեղ է հասել, վոր յեկեղեցական խորհուրդների ընտրությունների ժամանակ սկսել են առաջ քաշել չքավորներին, նրա համար, վորպեսզի ասեն՝ «Դուք ասում եք մեզ մոտ ամբողջովին հակահեղափոխական վերնաշերտ է, իսկ մենք առաջ ենք քաշում չքավորներին»։ Նրանք ունեն չքավորությունից իրենց առաջքաշածները։ Դա նկատի պետք է ունենալ, վորպեսզի այդ մեզ չխա-

րի։ Որինակի համար՝ մենք ունենք Ռամենսկում յեկե-
ղեցական խորհուրդները, վորոնք համարյա ամբողջովին
բանվորներից են, իսկ նրանց թիկունքում Մորհրդային
իշխանության ամենավոխերիմ թշնամիներն իրենց սև
գործն են կատարում։

ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՏԱՐՎԵԼԻՔ ԱԹԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ.

Հաստատված է ՊՈՒՌ-ի կողմից հուլիսի 1-ին 1929 թ.

1 ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

1. Գյուղում և քաղաքում սոցիալիզմի դիրքերի ամրացման և աճման հետ միասին, բանվորների և գյուղացիների լայն մասսաների մեջ աճում է և անհաշտվածությունը: Բայց դրա հետ զուգընթաց դասակարգային պայքարի սրումը յերկրում, ամենուրեք առաջ է բերում կրոնական կազմակերպությունների ակտիվության ուժեղացում: Յերկրում տեղի ունեցած այդ պրոցեսները վորոշ չափով արտացոլվում են և կարմիր բանակում: Այս վերջին տարին աչքի յե ընկնում նրանով, վոր կարմիր բանակային լայն մասսաների կողմից անկասկած առաջխաղացում կա դեպի անհաշտվածությունը, նկատելի յե կարմիր բանակայիններին առաջավոր մասի կողմից ակտիվություն ու հետաքրքրության զգալի բարձրացում դեպի կրոնի դեմ պայքարելու գործը: Միաժամանակ յեկեղեցական և աղանդավորական կազմակերպությունների կողմից նկատվում են կարմիր բանակի վրա ազդեցություն ունենալու փորձերի ուժեղացում:

2. Այդ պայմաններում կարմիր բանակային մասսայի դասակարգային դաստիարակության հերթական

խնդիրները, կարմիր բանակայիններին քաղաքական դեկավարությամբ և աղդեցությամբ լրիվ և բազմակողմանի կերպով ընդգրկելու խնդիրները, ավելի սուր կերպով դնում են կարմիր բանակայինի հակակրոնական դաստիարակության, կրոնական տրամադրությունների դեմ պայքարելու հարցը, վորը և պահանջում է վճռական բարելավել կարմիր բանակում հակակրոնական աշխատանքը:

Ներկա մոմենտում Կարմիր բանակում տարվելի հակակրոնական պրոպագանդի նշանակությունը և հատուկ կարևորությունը տակավին լրիվ չափով գիտակցված չե: Մեր այն վերջին ամիսներում հասարակական ուշադրության վորոշ կենդանություն և հետաքրքրություն է առաջ եկել այդ աշխատանքի մեջ: Անհրաժեշտ է ամեն կերպ ընդունել և ամրացնել նկատվող այդ կենդանությունը ու ձգտել, վորպեսզի հակակրոնական պրոպագանդը կարմիր բանակում դառնա քաղաքական ամբողջ աշխատանքի օրգանական և պարտադիր մասը:

3. Հակակրոնական աշխատանքի ընդհանուր դրությամբ Կարմիր բանակում, վորը բնորոշված է ՊՈՒՌ-ի ադիտ-պրոպ բաժնին կից՝ 1927 թվի խորհրդակցության կողմից, հիմնականում ճիշտ է մինչև այժմ: Սակայն ներկայումս արդեն կան բոլոր հիմունքները՝ ճշտելու և վերանայելու համար այդ բանաձևի մի շարք դրություններ, նկատի ունենալով, վոր հակակրոնական պրոպագանդը պետք է փոխադրել ավելի բարձր աստիճանի վրա, ավելի վճռական հեռեվոդական ակտիվ կերպով ծավալել այն, քան յեղել է առաջներում:

Համաձայն վերոհիշյալի անհրաժեշտ է դնել այն խնդիրների ծավալի ընդլայնման հարցը, վորոնք ծա-

ռանում են կարմիր բանակի հակակրոնական պրոպա-
գանդայի առջև, ամենից առաջ կարմիր բանակային-
ների հիմնական մասի նկատմամբ։ Բանաձևը մատնա-
նշում է, որ կարմիր բանակային մասսաների խոշոր
մեծամասնության հետ տարվող աշխատանքը պետք է
լինի հետևյալը. «Նրանց քաղաքական և կուլտուրա-
կան աճման ընդհանուր բազայի վրա լրիվ չափով ան-
վտանգ դարձնել ռազմաքաղաքական ընդհանուր դաս-
տիարակության վրա կրոնական դաղափարների և
զգացմունքների ունեցած ազդեցությունը և ամեն կերպ
դարդացնել նրանց մեջ քննադատական վերաբերմունքը
կրոնի և յեկեղեցու հարցերի նկատմամբ»։ Ներկա
պայմաններում այդ ձևակերպումը բավական չէ։
Ներկայումս պետք է ճգտել, որպեսզի կարմիր բան-
կային բանակում դտնվելու յերկու տարվա ընթաց-
քում, դարձյալ ընդհանուր կուլտուրական և քաղաքա-
կան աճման բազայի վրա, հաստատապես ըմբռնի և
գիտակցի կրոնական կազմակերպությունների դասա-
կարգային եյությունը, մնասը, կրոնի խանգարիչ դե-
ը յերկրի պաշտպանության, սոցիալիստական շինա-
րարարության և կուլտուրայի համար մղած պայքարում.
Առաջավոր կարմիր բանակայիններին, բանվորակ. կազմ
ունեցող տեխնիքական մասերի ծովային նավատորմի
զորամասերի նկատմամբ պետք է խնդիր դրվի պատ-
րաստելու կարմիր բանակայիններից գիտակից, ակտիվ
անատուվածներ, տպագայում գյուղում և քաղաքում
անատուված աշխատանք տանողներ։ Իր հերթին դեպի
այն կարմիր բանակայինները, որոնք բացահայտ
կերպով հավատում են, դեպի աղանդավորները պետք
է ներկայումս պարզ և առանձնակի մոտեցում ունե-
նալ, պահանջել ոչ միայն տանից տարրության կա-

տարել իր դինամիկական պարտքն ու կարգապահությունը, այլ հայտարարելով դրանցից ամեն մեկի սոցիալական դեմքը, մերկացնել, վորպես կուլակային իսկ ոլորտի տարածողների և մյուս կողմից անհատական մշակման տակ վերցնել մեզ սոցիալապես ավելի մոտիկ տարրերը (չքավորները, բատրակները, բանվորները,) ամեն կերպ ձգտելով հաղթահարելու նրանց կրոնական արամադրությունները, զգացումները, դաղափարները ու նախապաշարումները:

4. Հակակրոնական պրոպագանդի բովանդակությունը ներկայումս, ավելի, քան յերբևիցե պետք է ուրա կերպով կապել սոցիալիստական շինարարության, յերկրում տեղի ունեցող դասակարգային պայքարի հետ և կատուցել այդ միջազգային դրության ընթացիկ, կուլտուրական և շինարարության, ձեռք առած հրատապ փաստերի և կարմիր բանակի մարտունակության ամրացման առթիվ ձեռք առած միջոցառումների հիման վրա:

ԽՍՀՄ-ի դեմ պատրաստվող նոր պատերազմը, ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը, դյուղի սոցիալիստական վերակառուցումը, պայքարը բերքատվության համար, խորհրդային շինարարությունը, պայքարը նացիոնալիզմի, շովինիզմի, անտիսեմիտիզմի դեմ, պայքարը կուլտուրայի, նոր կենցաղի, հակաալկոհոլային պրոպագանդի համար և այլն—ահա այն մի շարք խնդիրները, վորոնց շուրջը պետք է ծավալվի հակակրոնական պրոպագանդը: Այդ վոչ միայն չի բացառում հակակրոնական պրոպագանդը կարմիր բանակային ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման հետ համադրելու անհրաժեշտությունը (մանավանդ կապված կարմիր բանակային մասսայի

կուլտուրական պահանջների ընդհանուր աճման հետ), այլ խնդիր է դնում ամեն կերպ ոգտագործելու հակակրոնական նպատակների համար բնագիտական, դյուղատնտեսական և սանիտարական պրոպագանդը։ Մայր աստիճան կարևոր է, ներկա պայմաններում դուդակցել հակակրոնական պրոպագանդը՝ դյուղատնտեսական դիտելիքների և «ագրոմինիմումի» պրոպագանդի հետ։

Հատկապես անհրաժեշտ է ներկայումս պայքարի ուժեղացում աղանդավորության դեմ, նրա դասակարդային եյության անխնա և հետևողական մերկացումը և դորամասի վողջ հակակրոնական ակտիվի գաղափարական զինավորումը այդ պայքարի համար։

Ե. Հակակրոնական պրոպագանդի մեթոդների նրկատմամբ աշխատանքի մեջ ներկա մոմենտում պետք է վերցնել մասսայական հակակրոնական պրոպագանդի կուրսը։ Ցերբեք չհրաժարվելով սեմինարներից, հակակրոնական խմբակներ ունենալուց և այլն, միևնույն ժամանակ անհրաժեշտ է կենտրոնացնել ուժերը ծավալելու համար մասսայական հակակրոնական աշխատանքը, ընդգրկելով նրա ամենալայն շերտերը։ Այդ խնդիրն իր ամբողջ սրությամբ առաջադրում և վաշտում հակակրոնական աշխատանքի դրման հարցը։

Մինչև այժմ հակակրոնական պրոպագանդն ընթացել է բացառապես պարտադիր վոչ մեծ մասամբ արտադրական աշխատանքի կարդով։ Ներկա պայմաններում կարմիր բանակայիների հակակրոնական դաստիարակության հատուկ կարևորությունը, խնդիրների դդալի ծավալը այդ ասպարեզում հարկադրում է խնդիր դնել, վորպեսզի մասսայական հակակրոնական պրոպագանդի ամենալայն զարդացման հետ

դուրսթաց, սահմանել այդ աշխատանքի նվազագույն վորոշ մի պարտադիր չափ, ամենից առաջ քաղաքասմունքի ծրագրի մեջ մտցնելով հակակրոնական մի շարք թեմաներ, իսկ սանիտարական ծրագրի մեջ հակակրոնական ելեմենտ:

6. Այն ժամանակ յերբ կազրային զորամասերում հակակրոնական աշխատանքը սկսվում և ծավալվել, յերկրային զորամասերում մանավանդ ընդհանուր հավաքներին, համարյա չի տարվում: Այդ ուղղությամբ հարկավոր և բեկում ստեղծել և հակակրոնական ինտենսիվ աշխատանքը դնել թե՛ նորակոչիկների հավաքին և թե՛ ընդհանուր հավաքներում: Նույնը պետք է անել և ըստ հնարավորության միջհավաքային շրջանում: Աշխատանքները պետք է տարվեն այնպես վոր կարմիր բանակայինների հակակրոնական դաստիարակության ընդհանուր խնդիրները փոփոխիկների պահեստի արձակման ժամանակ կատարված լինեն: Հավաքների ժամանակ պետք է անասուածների համապատասխան բջիջների մեջ լցնել Մարտնչող Անասուածների միության անդամներին, նրանց իրավունք տալով փոփոխիկների շարքերից նոր անդամներ ընդունելու:

7. Յերկարատև արձակուրդի ուղարկվող կարմիր բանակայինի հակակրոնական պատրաստության հարցը ներկայումս հանդիսանում է, վորպես հատուկ կարևոր մի հարց: Այդ խնդիրը պետք է կենսագործել թե՛ տեղական ՄԱՄ-ն հետ միասին հատուկ կուրսերի կազմակերպման միջոցով և թե՛ համապատասխան մասսայական ՄԱՄ-ն բջիջների ներբջջային աշխատանքի միջոցով:

8. Հակակրոնական պրոպագանդի ակտիվ ծավալման բոլոր խնդիրները հանգում են մի հիմնական հարցի՝ այն կադրերի հարցին, որոնք պետք և տանեն աշխատանքը՝ և ամենից առաջ պետկազմի հարցին։ Պետկազմը, որպես կարմիր բանակայինի քաղաքական դաստիարակիչ, պարտավոր է տանելու կարմիր բանակայինի հակակրոնական դաստիարակության գործը, և այդ պետք է լինի նրա դաստիարակչական աշխատանքի մի անբաժան մասը։ Ցելնելով այդ հիմնական խնդրից, պետք է վերացնել պետկազմի անտարբեր վերաբերմունքը դեպի հակակրոնական պրոպագանդը և դրա համար նրան պետք է տալ անհրաժեշտ ժամանակը՝ պատրաստման համար։ Անհրաժեշտ է ակզբնական շրջանում ու մոտ ժամանակներում այն ամբողջ միջին պետկազմի համար, որը զորամասերում անմիջորեն քաղ-դաստիարակչական աշխատանք է տանում կարմիր բանակայինների հետ կազմակերպել հակակրոնական հատուկ սեմինարներ՝ կարմիր բանակային դասագրքի ծրագրի ծավալով։ Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է ապահովել ռազմակրթական հիմնարկների ուսանողության համապատասխան հակակրոնական պատրաստությունը, մտցնելով նրանց ուսումնական ծրագրի մեջ հակակրոնական պրոպագանդը. որպես հատուկ մի առարկա։

9. Թեև հակակրոնական հիմնական ղեկավար կադրերը պետք է համալրվեն պետկազմի միջից, բայց մասսայական հակակրոնական աշխատանքի նախաձեռնողը, նրա տարածողն ու կազմակերպիչը ամենից առաջ պետք է լինի կոմյերիտական կազմակերպությունը։ Փորձը ցույց է տալիս, որ չնայած առանձին կոմյերիտականներն ակտիվ մասնակցություն են ցույց

տալիս հակակրոնական աշխատանքին, Կոմյերիտմիությունը, վորպես կազմակերպություն, այդ գործով բավարար չափով չի զբաղվում։

Անհրաժեշտ է, վորպեսզի հակակրոնական պրոպագանդը դառնա կոմյերիտական աշակցության խմբակների աշխատանքի որգանական մասը, վորպեսզի վերջիններն իրենց գործնական մասնակցության ձևերն այդ աշխատանքում, վորպես ամեն մի կոմյերիտականի համար մշտական խնդիր և վորն առանձնապես կարևոր և ապահովեն այդ գործում նրան ցույց տված մշտական ոգնություններ։ Կոմյերիտական կազմակերպությունների կարևորագույն պարտականություններից մեկը, դա հակակրոնական խմբակներ կազմակերպելուն աշակցելն է, այնտեղ կոմյերիտականները, ներգրավելն է, ակտիվորեն հակակրոնական յերեկույթներ, լենանկյուններում զրույցներ և այլ կազմակերպելուն աշակցելն է։

10. Զորամասերում հակակրոնական աշխատանքի ծավալման զգալիորեն արդելակ և հանդիսանում այդ աշխատանքի նկատմամբ կուսկազմակերպությունների կողմից անհրաժեշտ ուշադրության բացակայությունը։ Համարյա ամենուրեք հակակրոնական պրոպագանդի և անաստված շարժման հարցերը թույլ են արտացոլվում բջիջների աշխատանքի ծրագրերի մեջ, կուսկազմակերպության բյուրոն սակավ բացառությամբ համարյա չի հետաքրքրվում անաստված բջիջի աշխատանքներով, չի աշակցում հակակրոնական աշխատանքին։ Անհրաժեշտ է, վորպեսզի քարոզիչներն իրենց առաջ խնդիր դնեն վճռական բեկում առեղծելու դրա նկատմամբ, բոլոր զորամասերում տարածելով- այն նվաճումները, վոր կան առանձին բջիջներում՝ հակա-

կրոնական պրոպագանդի ղեկավարության գործում։ Շրջանային քաղվարչություններն ու քաղբաժինները զորամասերը հրահանգելիս պետք է մանրազնին կերպով ստուգեն հակակրոնական աշխատանքի դրությունը։

11. Անհրաժեշտ է իր ամբողջ սրությամբ դնել կարմիր բանակային մամուլը հակակրոնական պրոպագանդին մասնակից դարձնելու խնդիրը, կազմակերպելով բաժիններ կամ եջեր շրջանային թերթերում և կենտրոնական հրատարակություններում, ինչպես նաև կազմակերպելով անասված աշխատանքի լուսաբանումը պատի թերթերում, մասնակից դարձնել դրան գինթղթակցական հասարակայնությանը։ Դրան զուգընթաց անհրաժեշտ է ընդգծել բանակային հարցերի լուսաբանման անհրաժեշտությունը հակակրոնական մամուլում, մասնավորապես «Անասված» թերթում ստեղծելով կարմիր բանակայինի համար հատուկ բաժին, իսկ «Անտիրելիգիոզնիկ» ժուրնալում ռազմական բաժին։ ՊՈՒՌ-ի 1929-30 թ. հրատարակչական պլանում պետք է ապահովել հակակրոնական հանրամատչելի գրականության հրատարակությունը կարմիր բանակայինների համար (մտցնելով այդ «Կարմիր բանակայինի գրադարանի» մեջ)։

12. Հակակրոնական պրոպագանդի ծավալումն ազգային զորամասերում, վորոնք իրենց հիմնական մասսայով վարակված են կրոնական նախապաշարումներով, ծայր աստիճան կարեվոր նշանակություն ունի։ Անհրաժեշտ է, վորպեսզի ազգային զորամասերի քաղաքական մարմինները սերտ կապ ունենալով ազգային հանրապետությունների Մարտնչող Անասամիության խորհրդի հետ, հակակրոնական աշխատան-

քի վրա հատուկ ուշադրություն դարձնելին։ Առաջին հերթին, պետք է ձգտել ստեղծելու բոլոր ազգային պրոմասերում անասուված միության բջիջներ, ծավալել ազգային լեզուներով կարմիր բանակային հակակրոնական ձեռնարկ և կարմիր բանակային անասուածի տեղեկատու դիրք, թարգմանելու և հրատարակելու աշխատանքը և ձեռք առնել բոլոր միջոցները հրատարակելու կարմիր բանակայիններին համար հակակրոնական գրականության հանրամատչելի գրաղարան։

13. Վերև հիշված այս բոլորը բնորոշում են Մարտնչող Անասուածների միության բջիջների հերթական խնդիրներն ու դերը կարմիր բանակում։ Անասուածների բջիջների կազմակերպումը բոլոր պրոմասերում, նրանց համախմբումը նրանց աշխատանքի կենդանացումը հանդիսանում են հակակրոնական աշխատանքի ակտիվ ծավալման անհրաժեշտ պայմանը։ Պետք է, ի հարկե, նկատի ունենալ, որ կարմիր բանակի պայմաններում, ուր հակակրոնական աշխատանքը հանդիսանում է զորքի գաստիարակչական աշխատանքի օրգանական մի մասը, նա չի կարող Մարտ. Անասուա. միության բջիջների մենաշնորհը դառնալ, այլ պետք է տարվի քաղաշխատանքի ամբողջ սիստեմով։ Բայց միաժամանակ պետք է պարզ տեսնել, որ հակակրոնական աշխատանքի թուլության հիմնական պատճառներից մեկը մի կողմից՝ այդ աշխատանքն ապարատային կարգով անցկացնելն է՝ առանց կարմիր բանակային հասարակայնությանը մասնակից դարձնելու, և մյուս կողմից՝ Մարտնչող Անասուածների միության բջիջները հակակրոնական ներփակված խմբակներ դարձնելն է։ Մարտն. Անասուած. միության

բջիջները պետք է դառնան կարմիր բանակայինների մեջ տարվելիք մասսայական հակակրոնական աշխատանքի հասարակական կենտրոն: Նրանք իրենց հիմնական խնդիրների թվում նաև պետք է ունենան անասողածների լայն ակտիվի համախմբումն ու պատրաստումը, ակտիվ, որի վրա կարողանան հենվել քաղաքարատը, կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները ու հրամկազմը:

Հաշվի առնելով հակակրոնական ակտիվի աճումն ու մասսայական աշխատանքի խնդիրները վաշտում, ժամանակին պետք է հարց առաջադրել Մարտն. Անասողած միության վաշտային բջիջներ ստեղծելու մասին: Վաշտային բջիջները պետք է ծավալվեն աստիճանաբար այն ստորաբաժանումներում, որտեղ կան համապատասխան պայմաններ: Առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ բջիջներ գնդային դպրոցներում և սիրամյակների կոմանդաներին կից:

2. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

1 Մարտնչող Անասողածների Միության բջիջները կարմիր Բանակում կատարում են այն ընդհանուր խնդիրները, որ դրված են Մ Ա Մ-ն առաջ, ոգնելով քաղաքարատին, կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններին ու պետակազմին՝ կարմիր բանակայինի հակակրոնական դաստիարակության գործում:

2. Մ Ա Մ-ի բջիջը կրող է կազմակերպվել կարմիր բանակային ամեն մի զորամասում, նավերում, ռազ-

մակրթական հիմնարկներում, քանզի այդ նույն գործամասում, նախում, ուսմակրթական հիմնարկում կան Մ. Ա. Մ-ն շարքերը մտնել և ակտիվ աշխատել ցանկացող կարմիր բանակայիններ, ուսանողներ և պետական։

Ծանոթություն 1. Նայած թե քանի անդամներ կան Մ. Ա. Մ-ն բջիջներ կարող են կազմակերպվել գործամասի առանձին ստորաբաժանումներում (վաշտ, կոմանդա և այլն)։ Այդ դեպքում վաշտային բջիջները, գործամասերի մասշտաբով միանում են մի ընդհանուր բյուրոյի մեջ։

Ծանոթություն. 2. Ցերկրային գործամասերում, նոտարիուսների համաքներում և ընդհանուր համաքներում ՄԱՄ-ն անդամները ցուցակագրվում են գործամասի բջիջում, որն իրավունք ունի փոփոխիկների կազմից նոր անդամներ ընդունել, հետագայում նրանց ցուցակագրելով իրենց մշտական բնակավայրի ՄԱՄ-ն կազմակերպության մեջ։

3. Բջջի անդամներ կարող են լինել այն բոլոր զինվորական ծառայողները, նրանց ընտանիքի անդամները, որոնք ցանկություն են հայտնում մասնակցել հակակրոնական աշխատանքին և պարտավորվում են կատարել ՄԱՄ-ն կանոնադրությունը։

4. Բոլոր այն զինվորական ծառայողները, որոնք մտել են տվյալ գործամասի ՄԱՄ-ն բջջի մեջ որպես անդամ, համարվում են միասնական Մարտնչող Անաստվածների Միության անդամներ։

5. ՄԱՄ-ն բջիջը համարվում է իրավազոր՝ համապատասխան քաղաքական բաժինների և ՄԱՄ-ն վերադաս կազմակերպության կողմից հաստատելուց հետո։

6. Մուտքի անդամավճարը և ինտերնացիոնալ կոչնիկը սահմանված է համաձայն ՄԱՄ-ն կանոնադրու-

թյան։ Շարքային կարմիր բանակայինները և պարտադիր ծառայության կրտսեր պետակազմը աղատվում են միայն անդամավճարներ մուծելուց։

7. ՄԱՄ-ն բջիջը կարմիր բանակային զորամասերում տանում է իր ներբջջային և մասսայական աշխատանքը Մարտնչող Անասուածների Միության ընդհանուր կանոնադրության հիման վրա, կապ հաստատելով այդ նպատակով ակումբի, լենանկյան և հասարակական կազմակերպությունների հետ։

8. ՄԱՄ-ն բջիջների ղեկավարող մարմինները հաստատվում են զորամասի կոմիսարի կողմից։

9. ՄԱՄ-ն հանրապետական և շրջանային խորհուրդներին կից ստեղծվում են կարմիր բանակում տարվող աշխատանքի սեկցիաներ, վորոնք բաղկացած են ՄԱՄ-ն ներկայացուցիչներից և համապատասխան քաղմարմիններից ու զորամասերի ներկայացուցիչներից։ Նրանք աշխատում են հատուկ կանոնադրության հիման վրա և ղեկավարվում են ՄԱՄ-ն կենտ խորհրդին կից բանվ.-գյուղ. կարմիր բանակի աշխատանքի սեկցիայի ցուցումներով։

Ծանոթություն Շրջանի քաղվարչության թույլտվությամբ ռազմական սեկցիաներ կարող են գոյություն ունենալ և առանձին խոշոր կայազորներին կից։

10. ՄԱՄ-ն բջիջների ընդհանուր ղեկավարությունը զորամասում, հասարակական մյուս կազմակերպությունների հետ հավասարապես, պատկանում է զորամասի կոմիսարին (քաղոգնականին), իսկ ավելի վեր՝ դիվիզիաներին (կայազորերին), բաղաներին, շրջաններին (նավատորմների) քաղվարչություններին, վորոնք իրենց պրակտիկ աշխատանքը համաձայնեցնում

են ՄԱՄ–ն համապատասխան կազմակերպությունների հետ։

11. ՄԱՄ–ն որդաններն իրենց բոլոր ցուցումները նպիրեկտիվներն ուղարկում են զորամասերի բջիջներին՝ համաձայնեցնելով այդ համապատասխան քաղմարմինների հետ։ Անատ. Միության խորհուրդների բոլոր դեկավար նյութերը, վորոնք նախատեսված են կարմիր բանակի համար, պետք է համապատասխան քաղմարմինների կողմից հաստատված լինեն։

3. ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԵՏԿԱԶՄԻ ՄԵՋ.

1. Մինչև այժմ Բ. Գ. Կ. բանակի պետկազմը բավականաչափ ակտիվություն և նախաձեռնություն չի ցուցաբերել հակակրոնական պրոպագանդի գործում։ Մինչդեռ հակակրոնական պրոպագանդայի լայնածավալումը ԲԳԿԲ–ում անհնար է առանց ԲԳԿԲ վողջ պետկազմի այդ աշխատանքին ցույց տված մասնակցության։ ԲԳԿԲ–ի քաղմարմինների և կուսկազմակերպությունների հերթական խնդիրներն են հանդիսանում, կարմիր բանակայինների հետ ամբիջապես քաղդաստիարակչական աշխատանք տանող վողջ պետկազմը ներգրավել հակակրոնական աշխատանքին։ Անհրաժեշտ է ամեն կերպ ձգտել ու հասնել վորպեսզի իր կենցաղում և ծառայության մեջ պետկազմը դառնա անատոմածի մի որինակ, վորը հարվածում է կրոնի չիրմայի տակ ծածկված պրոլետարիատի, դասակարդայնորեն թշնամական ուժերի բոլոր հարձակումներին։

Պետկազմի հակակրոնական գործունեության ակտիվացման ասպարեզում քաղկազմը և կուսպետկազմը

ղեռք և առաջամարտիկ լինեն, իրենց անձնական մասնակցությամբ ցույց տալով հակակրոնական աշխատանքի ծավալման նախաձեռնության և ակտիվության օրինակ։

2. Պետկոմի վորոշ պասսիվություն հակակրոնական աշխատանքի ասպարիզում բացատրվում է գլխավորապես պետկոմի այդ ասպարիզում ունեցած սնբավարար պատրաստությամբ։ Դրա հետևանքով հրամանատարը, իսկ յերբեմն եվ քաղաշխատավորը այնքան եվ բավական պարզ չեն պատկերացնում, վոր կարմիր բանակային վորոշ շերտերի կրոնամոլությունը հանդիսանում է պրոլետարիատին դասակարգային խորթ տարրերի իդեոլոգիական ազդեցության ծավալման բազա, նախապայմանն և այսպիսով իր մեջ ԲԳԿԲ-ի մարտունակության թուլացման վտանգ է պարունակում։ Նրանք տակավին հակակրոնական աշխատանքին նայում են վորպես պրոպագանդի նեղ յուրահատուկ մի ճյուղի վրա, չեն տեսնում կարմիր բանակայինի հակակրոնական պրոպագանդի սերտ կապը քաղաքատիպարակության բոլոր խնդիրների հետ, հակակրոնական աշխատանքը համարում են լրացուցիչ մի բեռնավորում, հակակրոնականների հատուկ կադրերի գործ։

Միաժամանակ թույլ և հակակրոնական պրոպագանդ տանելու համար, պետկոմի նախապատրաստության աշխատանքը թե ուղղակրթական հիմնարկներում, և թե ԲԳԿԲ զորամասերում։ Այս բոլորը պահանջում են անհապաղ, վճռական միջոցներ բարձրացնելու համար պետկոմի հակակրոնական պատրաստականությունը, վորն անմիջական դաստիարակչական աշխատանք և տանում կարմիր բանակայիններին հետ,

գինելու նրան անհրաժեշտ գիտելիքներով և վարժություններով հակակրոնական աշխատանք տանելու համար և պահանջել պետկազմից ակտիվ մասնակցություն հակակրոնական աշխատանքին։

3. Անհրաժեշտ է առաջիկայում, վորպես խմբակավար ներգրավված և արտադպրոցական աշխատանքին մասնակցող ամբողջ միջին պետկազմին անցկացնել հակակրոնական սեմինարներից, ապահովելով սեմինարները բարձրորակ դեկավարական կազմով և գրականությամբ։

Բացի այդ ա) ծավալել բարձր տիպի խմբակների (կրուժոկների) ցանցը, ներգրավելով նրանց մեջ այն պետկազմին, վորն արդեն «կարմիր բանակային հակակրոնական ձեռնարկ»-ի սահմաններում պատրաստություն ունի, բ) Կարմիր Բանակի Տներում ճամբարներում և կայազորներում կազմակերպել դասախոսություններ հակակրոնական հարցերի շուրջը, գ) կլոնի հարցին վերաբերյալ Կարմի Բանակի Տան կից կազմակերպել կոնսուլտացիա, դ) պետկազմի ժողովներում և հրահանգչական պարապմունքներում դնել հակակրոնական պրոպագանդին վերաբերող հարցեր, նպատակ ունենալով պարզաբանելու մեր գիծը հակակրոնական պրոպագանդի ասպարիզում բացատրելու ձեռք առած հերթական միջոցառումները և փոխանակելու աշխատանքի փորձը. յե) հերթական հակակրոնական կամպանիաներ տանելու համար պետկազմի հատուկ պատրաստություն։

4. Անհրաժեշտ է ապահովել հակակրոնական պետկազմի համար հատուկ գրականության հրատարակություններ, վորը լուսաբաներ հակակրոնական հարցերը վոչ

միայն ըստ բովանդակության այլ և ըստ մեթոդիկայի, ուժեղացնել հակակրոնական աշխատանքի լուսաբանումը ռադիոական պարբերական գրականության միջոցով (շրջանային թերթեր), ապահովել Կարմիր Բանակի տների գրադարանները, գրքամասերը անհրաժեշտ ժամանակակից հակակրոնական գրականությամբ, այն չափով, որքանով լիովին բավարարվի այդ գրականության նկատմամբ պետակարգի պահանջը:

5. Նկատի ունենալով, որ պետակարգի առանձին շերտերն իրենք էլ զգում են կրոնական տրամադրությունների ազդեցությունը, որ դլխավորապես բղխում է ընտանիքից (ծնողները, կինը և այլն), և ամեն անդամ նրանք ընդունակ չեն՝ լինում հակազդելու այդ ազդեցություններին, անհրաժեշտ է պետակարգի ընտանիքների մեջ լայն հակակրոնական պրոպագանդ ծավալել, վճռական պայքար մղել արմատախիլ անելու համար հրամանատարի ընտանիքից կրոնական կենցաղի տարրերը (սրբապատկերներ, հրամանատարի ընտանիքի կողմից կրոնական սովորությունների պահպանում, կրոնական տոնակատարություններ և այլն):

Այդ աշխատանքը անհրաժեշտ է ծավալել պետակարգի հանրակացարաններում, Կարմիր բանակի տներում, ակումբներում, պետակարգի ընտանիքների համար կազմակերպելով հատուկ դեկուցումներ, դասախոսություններ, խմբակներ, ներգրավելով նրանց ՄԱՄ-ն բջիջների մեջ՝ որպես անդամներ, հակակրոնական կամպանիաների ժամանակ սպասարկելով պետակարգի ընտանիքներին:

6. Կրտսեր հրամանատարը մեծ դեր է կատարում կարմիր բանակայինի քաղաքական դաստիարակու-

թյան գործում, բայց շատ քիչ և մասնակցում հակակրոնական աշխատանքներին։ Գնդային դպրոցներում անհրաժեշտ և ուժեղացնել կրտսեր հրամկազմի հակակրոնական պատրաստությունը թե բովանդակության տեսակետից, և թե՛ մեթոդական տեսակետից, խնդիր ունենալով կրտսեր հրամանատարից անատված ակտիվիստի մշակելը։ Անհրաժեշտ և նաև ուժեղացնել հակակրոնական աշխատանքը միամյակների հետ և հենվելով նրանց ընդհանուր կրթական և հասարակական քաղաքական բարձր պատրաստության վրա, խնդիր դնել նրանցից պատրաստելու հակակրոնական ակտիվի կադրեր։

7. Ամեն կերպ անհրաժեշտ և ուժեղացնել բոլոր կատեդրիաների պետկազմի ընդգրկումը Անատված-ների Միության մեջ և ներգրավել նրանց ՄԱՄ-ն ղեկավար աշխատանքին։

4. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Մինչև վերջին ժամանակները հակակրոնական աշխատանքը կարմիր բանակում բավական չափով չի ընդգրկել լայն կարմիր բանակային մասսաներին։ Նրա հիմնական իսկ վորոշ տեղերում և միակ ձևը հանդիսանում է գնդի մասշտաբով կազմակերպված հակակրոնական խմբակը, վորն ընդգրկել է առաջավոր կարմիր բանակայինների մի փոքր շրջան, սովորաբար յեղել և ինքնամփոփ, նեղ պրոպագանդիստական ծրագրով և խնդիրներով։

Ակումբում և մանավանդ վաշտում սիստեմատիքաբար հակակրոնական աշխատանք չի ծավալվել, տար-

վել և անկանոն, պատահական կերպով, առանց պլանի և հաճախ իր վորակով շատ ցածր և յեղել։

Ներկայումս՝ կարմիր բանակայիններին հակակրոնական դաստիարակության հիմնական խնդիրների լուսաբանության տակ, պետք և վճռական բեկում ստեղծել հակակրոնական աշխատանքի սիստեմի և մեթոդների նկատմամբ, վերցնել ամուր և հետևողական կուրս այդ աշխատանքի մասսայականացման և այդ աշխատանքով կարմիր բանակայինների ամենալայն շերտերի ընդգրկման համար։ Դրան կարելի յե հասնել հետևյալ պայմաններով, 1) վաշտում, լենանկուններում, կար. բանակային հանրակացարանում զարգացնել լայն հակակրոնական աշխատանքը 2) հակակրոնական պրոպագանդ մղելու գործին մասնակից դարձնել բոլոր քաղլուս և հասարակական կազմակերպություններին (առաջին հերթին՝—լենանկյուններին, ակումբներին, գրադարաններին և Կարմիր բանակի մամուլին) 3) ստեղծել անասավածների շարքային լայն ակտիվ կոմյերիտականներից և առաջավոր կ. բանակայիններից։ Դրա հետ միասին անհրաժեշտ և կտրականապես չեշտել, վոր հակակրոնական աշխատանքի մասսայականության պահանջը յերբեք չի կարելի դնահատել վորպես այդ աշխատանքի քանակային ուժեղացում անկախ նրա վորակից։ Հակակրոնական աշխատանքի մասսայականությունը, վոչ միայն չպետք և նշանակի թե աշխատանքի մեջ անհրաժեշտ և մեծ թափ մտցնել, այլ և վորպես անհրաժեշտ պայման,—պետք և մի կողմից՝ բարձրացնի նրա վորակը, ուժեղացնի նրա դասակարգային կայունության, բովանդակալիության պայծառության համար մղած պայքարն և մյուս կողմից ուժեղացնի պայքարն ընդդեմ աղավաղումների, վիքուն

Ֆրանսիայի կրոնական տրամադրությունների նկատմամբ տեղած հաշվողական և գիտական վերաբերմունքի։

ԿՐՈՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիր բանակայինի կրոնական տրամադրությունների ուսումնասիրությունը մասսայական հակակրոնական աշխատանքի զարգացման հիմնական և առաջին նախապայմանը պիտի կազմի։ Այդ ուսումնասիրությունը մինչև այժմ ավելի քան վատ է դրված։ Կրոնական տրամադրությունների ուսումնասիրությունը պետք է սիստեմ դառնա, տարվի անընդհատ, և լինի կարմիր բանակայինի ուսումնասիրության բոլոր աշխատանքի որդանական մասը։

Կարմիր բանակայինների կրոնական տրամադրությունների ուսումնասիրության ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել ակտիվ հավատացողների և աղանդավորների անհատական ուսումնասիրության վրա, հայտարերելով նրանց սոցիալական դեմքը, նրանց կապը կրոնական կազմակերպությունների հետ, նրանց կապը կարմիր բանակայինների հետ։

Նկատի ունենալով, որ կարմիր բանակայինների կրոնական տրամադրությունները բացահայտ ձևով չեն հայտարերվում, անհրաժեշտ է նրանց ուսումնասիրության աշխատանքն ավելի խոր և սիստեմատիկ դարձնել։ Առաջին հերթին անհրաժեշտ է.

1) Կարմիր բանակայինների կրոնական տրամադրությունների ուսումնասիրության խնդիրն առաջա-

պրել դրամասին, ամբողջ ակտիվին, պեռկազմին, կուսակցականներին և կոմյերիտականներին:

2) Անպայման մասնակից դարձնել ստորին անասուված ակտիվն ուսումնասիրության գործին, նրա առաջ դնելով կոնկրետ խնդիրներ և պարբերաբար հավաքելով այդ ակտիվին վերադարձ ինֆորմացիայի համար:

3) Հաշվի առնել և ի մի ամփոփել այն ամբողջ նյութերը, որ հայտաբերվել են հակակրոնական աշխատանքի ընթացքում (հարցեր, յելույթներ և այլն):

4) Թույլատրելի համարելով կարմիր բանակայիններին մեջ անանուն անկետայի կիրառումը կրոնապաշտության վերբերյալ, միաժամանակ այդ ձևը չհամարել որպես հիմնական ձև, տանելով այդ եպիզոդիկ կերպով՝ ընտրողական կարգով:

5) Յեկեղեցական մեծ տոների նախորեյին և այլ դեպքերում հավաքել ամբողջ ակտիվին, և հատուկ ցուցումներ տալ կարմիր բանակայինների տրամադրությունների ուսումնասիրության մասին. համապատասխան աշխատանք տանել հակակրոնական պրոպագանդայի ասպարիզում ձեռնարկած այս կամ այն խոշոր միջոցառումների առթիվ (դիսպուտ, յերեկույթ, կինոնկար և այլն), հաշվի առնելու համար կարմիր բանակայինների վրա ունեցած ազդեցությունը:

6) Պարբերաբար ամփոփել ուսումնասիրության ամբողջ նյութը, կարմիր բանակայինների կրոնական տրամադրությունների մասին պարբերաբար զեկուցումներ տալ կոմյերիտական ժողովներում, ՄԱՄ-ի բջիջների ժողովներում և այն:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԽՄԲԱՅԻՆ ԱԳԻՏԱՑԻԱ

Անհատական և խմբային ագիտացիան առաջին ողակն և մասսայական հակակրոնական աշխատանքի ծավալման գործում։

Այդ պայմանավորվում է վոչ միայն նրանով, վոր առորյա կենցաղում անհատական և խմբակային ագիտացիան թույլ է տալիս ավելի լայն չափով ընդգրկելու կարմիր բանակային մասսային, այլ և նրանով, վոր աշխատանքի այդ ձևերը հանդիսանում են պայքարի ամենազորեղ զենքերից մեկը աղանդավորներին կրոնական քարոզների դեմ, վորոնց աշխատանքի հիմնական մեթոդը հանդիսանում է կարմիր բանակայինների անհատական մշակումը։

Անհրաժեշտ է.

1) Ամենասուր կերպով առաջադրել ամբողջ ակտիվին և առաջին հերթին՝ կուսակցականներին ու կոմյերիտականներին, առորյա կենցաղում կրոնի դեմ մղվելիք ակտիվ պայքարի խնդիրը, վճռականապես կռվելով հաճախակի տեղի ունեցող՝ չեզոքության, հաշտվողականության ու պոչականության դեմ։

2) Ապահովել զորանոցում, լենանկյունում, կարմիր բանակային թեյատնում անասսված ակտիվի հետ ծրագրային և կազմակերպված կերպով զրույցներ անցկացնելը։

3) Սիստեմ դարձնել «Անասսված» թերթին և կարմիր բանակային թերթերում տեղավորված նյութերի պարբերական և բարձր ընթերցումը։

4) Պարբերաբար լսել ՄԱՄ-ն առանձին անդամների հաշվետու զեկուցումներ կարմիր բանակայինների մեջ տարած իրենց աշխատանքների մասին։

5) Ապահովել հակակրոնական նյութերի լայն տարածումը և նրա ազդեցությունն անատոված ակտիվի կողմից։

6) Հակակրոնական աշխատանքին լծել ակտիվ կոլեկտիվները և նրանց ծրագրերի մեջ մտցնել հակակրոնական պրոպագանդի հարցերը։

ՅԵՐԵԿՈՒՅԹՆԵՐ, ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՒՆՆԵՐ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

Ցեյուլթները, դասախոսությունները, զեկուցումները և այլն թեև գործադրվում են զորամասերում հակակրոնական աշխատանքի նպատակով, բայց տարվում են. 1) սովորաբար միայն գնդի մասշտաբով. և 2) անկանոն, անծրագիր, յերբ պատահում է։ Անհրաժեշտ է ամեն կերպ զարգացնել աշխատանքի այդ ձևերը, տանելով այն վոչ միայն գնդում, այլ և վաշտում, նախորոք մտածված և նշված ծրագրով։

Մասնավորապես պետք է՝.

1) Առանձին, ամենից սուր խնդիրների վերաբերյալ (կրոնը և բերքի համար տարվող պայքարը, կրոնը և հակասեմիտիզմը) կազմակերպել զեկուցումներ։ Այդ զեկուցումների հաճախելուն ներգրավել կարմիր բանակային լայն մասսաներին։ Այդ թեմաների շուրջը կազմակերպել նաև նախորոք խնամքով նախապատրաստված դիսկուսիաներ։

2) Ակումբում պրակտիկայի մեջ մտցնել հակակրոնական ցիկլային զեկուցումներ (հիմնականում ըստ հակակրոնական խմբակի թեմաների)։ Խնդրել ՄԱՄ-ն ինենտխորհրդին ՊՈՒՌ-ի հետ միասին տալու այդ դասախոսությունների մշակված կոնսպեկտները։

3) Գործադրել հակակրոնական եքսկուրսիաներ դեպի թանգարանները, ցուցահանդեսները, վանքերը, ինչպես նաև բնագիտական եքսկուրսիաներ դեպի դաշտը:

4) Անհրաժեշտ համարել բոլոր Կարմիր Բանակի Տների կողմից շարժական հակակրոնական ցուցահանդեսի կազմակերպումը: Զորամասերի ակումբների կողմից, տոների նախորեներին, կապված տարվող կամպանիաների հետ կազմակերպել եպիզոդիկ ցուցահանդեսներ:

5) Գործադրկության մեջ մտցնել «հրաշքների յերեկո», համապատասխան փորձերով, ֆոկուսներով և այլն:

6) Նկատի ունենալով, վոր հակակրոնական դիսպուտների կազմակերպումը հնարավոր է միայն խոշոր կայազորներում, համապատասխան կվալիֆիկացիա ունեցող ուժեր ունենալու և նախորոք խնամքով նախապատրաստելու դեպքում:

7) Խնդրել ՊՈՒՈ-ին մատակարարելու զորամասերի ակումբներին դիտողական ձեռնարկներ, փորձերի համար անհրաժեշտ նյութեր և այլն:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անհրաժեշտ է հակակրոնական պրոպագանդին մասնակից դարձնել գեղարվեստական աշխատանքի բոլոր ձևերը, դրա հետ շարունակ նկատի ունենալ, վոր գեղարվեստական աշխատանքը իրական արդյունքներ կտա այն դեպքում, 1) յերբ նա տոկուն բովանդակություն ունի, 2) յերբ գեղարվեստական վորակն ապահովված է: Պատուրա, չափազանց բոնապրոսիկ և ագի-

տացիոն լինելը հակակրոնական աշխատանքում ավելի քան վտանգավոր է և կարող է բացասական արդյունքներ տալ և հող ստեղծել կրոնական ագիտացիայի համար :

Պետք է

1) Միջոցներ ձեռք առնել ամեն կերպ ոգտագործելու հակակրոնական պրոպագանդի համար կարմիր բանակային եստրադան և «Պետրուշկան» :

2) Դրամատիքական խմբակների բեպերտուարներում ապահովել հակակրոնական պիեսներ : Խնդրել ՊՈՒՌ-ին համապատասխան ռեպերտուարի հրատարակություն նախապատրաստելու համար :

3) Ցերգեցիկ խմբակների ռեպերտուարի մեջ համապատասխան յերգեր մտցնել : Ատիճանաբար տարածել այդ յերգերը կարմիր բանակային մասսաների մեջ :

4) Կինոֆիլմաների շուրջը, վորոնք կարելի յե ոգտագործել հակակրոնական աշխատանքի համար, համապատասխան աշխատանք տանել : Անհրաժեշտ համարել Պետֆինկինոյի կողմից բաց թողնելու հատուկ հակակրոնական ֆիլմ :

Անցկացնել հակակրոնական հաղորդագրությունների կազմակերպված ռադիո-ունկնդրում :

ԳՐԱԴԱՐԱՆ

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հակակրոնական դրականության մասսաների մեջ տարածելու գործի և նրա հետ տարվելիք աշխատանքի վրա : Փորձը ցույց է տալիս, վոր՝ 1) գորամասերի գրադարանները հակակրոնական գրքեր համարյա թե չունեն, 2) վոր նույնիսկ այն գրքերը, վորոնք կան գրա-

պարանում, բոլորովին քիչ են ոգտագործվում: Ձեռք առնելով բոլոր միջոցները՝ դրադարանները սիստեմատիկ կերպով լրացնելու համար հակակրոնական գրականության մասին, միաժամանակ կարելի է լավ հիմքերի վրա դնել այդ դրականությամբ տարվող ակտիվ աշխատանքը:

Մասնավորապես՝

1) Հակակրոնական դրականություն անպայման մտցնել վաշտային աբոնիմենտների կապի մեջ

2) Կազմակերպել գրքերի ցուցահանդես, կախել հանձնարարական ցուցակներ և այլն

3) կազմակերպել հակակրոնական գրքի կոլեկտիվ ընթերցում

4) կազմակերպել գրական դատեր այդ գրքի շուրջը:

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐ

Հակակրոնական լայն կամպանիաները անցկացնելը մանավանդ «ծննդից» և «զատկից» առաջ Մարտն. Անաստվածների Միության բջիջների կարեվորագույն խնդիրներից մեկն է: Հաշվի առնելով նախորդ փորձերը, անհրաժեշտ է՝

1) Աշխատանքը տանել կրոնական տոների առթիվ վորպես յերկարատև կամպանիա, սկսելով այդ աշխատանքը վոչ պակաս քան տոնից մի ամիս առաջ:

2) Ապահովել այդ կամպանիայում լայն հասարակայնության մասնակցությունը, մասնակից դարձնել դրան զորամասի կուլտուր-լուսավորական և հասարակական բոլոր կազմակերպություններին:

3) Հաշվի առնել, վոր համաձայն ունեցած փորձի,

տոն որերին հակակրոնական աշխատանքի լավագույն ձևերից մեկն է մասսայական միտինգը:

4). Տոն որերին ապահովել կարմիր բանակային մասերի կապը բանվորական հասարակայնության և Լ. Կ. Յե.Մ.-ի հետ (տեղական յերեկույթների, եքսկուրսիաների կազմակերպում և այլն):

ԼԱՅՆ ԱԿՏԻՎԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Վերև հիշված այս բոլորը կարելի յե իրագործել անասուածների ստորին լայն ակտիվ ստեղծելով և դաստիարակելով: Այդ խնդիրը կենտրոնական խնդիր և կարմիր բանակային հասարակայնության ու առաջին հերթին ՄԱՄ-ի բջիջների ուշադրությունը պետք է գրավի:

Դրա համար հատկապես կարևոր է՝

Ապահովել ակումբներում ինչպես նաև գնդային դպրոցների լեռանկյուններում հակակրոնական խմբակների ստեղծումը և ծրագրային աշխատանքը. ամեն կերպ ակտիվացնել այդ խմբակների աշխատանքը, մասնավորապես տեղեկացնելով խմբակի անդամներին կարմիր բանակայինների մեջ տարվող աշխատանքի մասին և ոգնելով նրանց այդ աշխատանքում: Այդ խմբակին մասնակցելը ՄԱՄ-ի բջիջների ամեն մի ակտիվիստի պարտականությունը պետք դառնա:

2) Ապահովել ՄԱՄ-ի բջիջների կանոնավոր ժողովները, ոգտագործելով այդ ժողովները ՄԱՄ-ի անդամների պատրաստության համար, նրանց համար դնելով ոչ միայն կազմակերպչական խնդիրներ, այլ և զանազան հակակրոնական թեմաների շուրջը զեկուցումներ, մեթոդական հրահանգչական զեկուցումներ և այլն:

3) Կոմյերիտական դպրոցների, ագիտ-կոլեկտիվների ծրագրերի մեջ մտցնել հակակրոնական խնդիրներ և այլն։

4) Միջոցներ ձեռք առնել «Անաստված» թերթի և հակակրոնական այլ գրականության անհատական և կոլեկտիվ բաժանորդագրության համար ամբողջ ակտիվի կողմից։ 5. Նպատակահարմար դտնել կար. Բանակի Տներին կից կազմակերպելու հակակրոնական կուրսեր ակտիվի համար, ներդրավելով նրանց այն դասախոսություններին զեկուցումներին ու դասընթացներին, որը կազմակերպում է Մարտնչող Անաստվածների Միությունը։

6) Աշխատանքի առանձին ցիկլային հարցերի վերաբերյալ տալ պետկազմին և անաստված ակտիվին ընթացիկ հրահանգավորումը։

ՅՈՒՇԱԿ

	Եջ
ԽՍՀՄ Անասնվածների Միության համամիութենական յերկրորդ համագումարի դիմումը . .	3
Կրոնի և կապիտալի դաշինքը	3
Կրոնը, աշխատավորությանը ճնշելու գործիք է .	4
Ընդդեմ կրոնի և կապիտալիստների	6
Հանուն սոցիալիզմի համաշխարհային հաղթանակի	7
Մեր գործը կապված է ընդհանուր պետական շահերի հետ	8
Արշավի յելնենք հանդգնացած հոգևորականության դեմ	9
Ուշադրություն յերեխաներին և յերիտասարդությանը	10
Հանել կրոնի կապանքները աշխատավոր կանանցից	11
Մեզ ոգնելու	12
Հանուն աշխատավորության միջազգային միասնության	13
Մենք դեմ ենք աստծուն և դեմ ենք կապիտալին, մենք սոցիալիզմի կողմն ենք	15
Կրոնը մինչև 1917 թվի հեղափոխությունը և նրանից հետո	15
Մեր թուլության պատճառները	19
Աշխատանքի պայմանները	23

Հակակրոնական պրոպագանդի հերթական խնդիրները կարմիր բանակում 32
Կանոնադրություն Բանվորագյուղացիական կարմիր բանակի զորամասերի մարտնչող անաստվածների միության բջիջների մասին . . . 42
Հակակրոնական աշխատանքը ռազմակրթական հիմնարկների պետկազմի մեջ 45
Ս՝ասսայական հակակրոնական աշխատանքի հարցերը կարմիր բանակում 49
Կրոնական տրամադրությունների ուսումնասիրությունը 51
Անհատական և խմբային ագիտացիա 53
Ցերեկույթներ, դասախոսություններ, զեկուցումներ 54
Գեղարվեստական աշխատանք 55
Գրադարան 56
Հակակրոնական կամպանիաներ 57
Լայն ակտիվի պատրաստումը 58

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0001602

[064.] 1

A II / 24549